Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

23280
23283
23284

76-77

# ԱՐՈՒՍԵԱԿ

## Ս. ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

## ԶՄԻՒՌՆԻՈՅ

№ 157

23284

ՏԵՏՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

АРУТЮНЪ МЕЛКОНОВИЧЪ ЧИЛИНГАРОВЪ АХАЛЦИХЪ



ԶՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ
1866

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
31403

# Սէր

Սէ՛ր, նենգաւոր և դաժան,
Ո՛վ իմ բաղձից դու ըստուերք,
Քո աղաղաւ ո՛չ ո՞րքան,
Զինե անցին սեաւ գիշերք:
Ես՝ չ՛ըղձիտեմ, բերկրալից,
Զի՛նչ դու յինքեանդ առբերես
Նախ ըղձուրումն անուշից,
Ի՛չ ովկիա՛ն փրփրադէղ:
Սակայն բընաւ և ընդէ՞ր,
Դու ոխերիմ, Սէ՛ր դու Սէ՛ր,
Ածես յետոյ յիս գիշեր,
Եւ ցաւ 'ի սիրտս կարեվէր:
Ո՛վ Թունաբոյր մանուշակ,
Ո՛հ դու պատրես զիմ ոգի,
Զո՛ւնիս, չո՛ւնիս յիշատակ,
Ո՛չ ես փառաց արժանի:
Զքնաղ բաղդիս դաւաճան,
Ո՛վ երկսայրի դու սուսեր,
Ե՞ր զիմ ըղսիրտ՝ քեզ վահան,
Աղխողո՛րմ խոցեցեր:
Ահա՛ ես ո՛հ, մեռանիմ,
Մի 'ի զոհիցըդ յաւերժ,
Արտասուելի իմ շիրիմ,
Կացցէ վըկայ մի՛նչ ցըվերջ:

1866

ՍՄԲԱՏ, ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Աշ. Ա. Դասարանի

# ԵՐԻԿՈՒՆ

ԵՐԿԱՑՆԷԻՆ տակաւ ըստուերքաշեղ լերանց բարձրայօնից,
Եւ բըլրոցըն հովանի զամ քան ըզգամ մութ ծաւալէր ։
Եւ սաղարթք խիտ առ խիտ աշեղատես անտառաց,
Գըծէին յերեսս երկրի նոր իմն ուղի 'ի մըռայլ ։
Գնային թռչունք վաստակաբեկք թառել իւրեանց 'ի դադարս,
Բայց Սոխակն քաղցրաձայն 'ի չոր սաղարթսըն գեղգեղէր ։
Եւ Արփենին յամպոց յամպըս ոսկեձոյլ սահելով,
Կէս գիմացն վերակալէր զալեօք նըշոյլ արփիանաներկ,
Ցորմէ լերանցըն գագաթունք շողշողէին անդ միայն,
Եւ կամարքըն երկնից գեղերփնէին վարդակարմիր ։
Անդէն մըմիկ շնչէ յարեւմըտից 'ի դըրանց,
Զեփիւռ քաղցրասիգ ընդ փըրփրադէզ ալիս ծովուն,
Գեղածիծաղ ժպտելով զայն վէտ վէտ ջուրքն յարեւելս ։
Համբուրէին ըզկոհակսն, և ղընդային և դառնային ։
Այսպէս դաշտըն կապուտակ հարթածաւալ ծածանէր,
Եւ անտառք սաղարթախիտք տային սօսիւն հըրաշալուր ։
Հուսկ յապայն խաղաղեցաւ ծովն փըրփրադէզ 'ի ծըփալոյ,
Եւ Երանն յառագաստին կայր նուաղեալ անշըշունչ ։
Նոր իմն էառ կերպարան արփիանաներկն Ողիմպոս,
Եւ ընդ եւ փոխարկեցաւ 'ի կապուտակ յաղօտ գոյն,
Եւ եկեալ յերեւան 'նդ երեսս երկնից պարք աստեղաց,
Ըզգեցան հանդերձըս ջինջ սեաւ գիշերոյն լուսատու ։
Ի թիկանցըն սեաւ լերանց արծաթափայլըն լուսին,
Ողջունէր զդաշտն մաղձային, որ շողշողէր միւսանգամ ։
Ըսփոփէին 'ի լուսոյն սիրտք ցաւահոծք և վըդովեալք,
Հաւք ըզգիշեր տխրանուէր գեղգեղէին յիւրեանց 'ի բոյնս,
Ընդ նոսին և կարկաջք գետոց, վտակաց պաղպաջուն,
Խփէին զարտեւանունս մարդկան 'ի քուն առ ժամայն ։



Այսպէս և իմըս հոգի զամ քան ըզգամ շիջանի,
Եւ փըչէ ընդ ոլորտս իբրև զեփիւռ վերջալուսեան ։
Աստէն փակէ զաչկունս իւր յակնախըտիտ Արփենւոյն,
Անդ բանալ և տեսանել զյաւերժականըն հօրիզոն ։

1866 ՍՄԲԱՏ, ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Աշ, Ա. Դատարանէ

«Կին յորժամ ծնանի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա, այլ իբրև ծնանի՝ ոչ եւս յիշէ զտրտմութիւնն, զի ծնաւ մարդ յաշխարհ» ։

Յովհ. Գլ. ԺԶ. 21 ։

ԶԻՐ առօրեայ ձիր հըրաշալի
Առ 'ի վերուստ մեզ պարգեւի ·
Եւ զհնարքանչ զեղ Արեւու
Վայելողացն թիւ յաւելու ։
Այսօր նոր մարդ ծնանի յաշխարհ
Ի մահացուաց վըսեմ գումար ·
Բանալով մատաղ մանկիկ
Զինննամսեայ բանդըն աղջամղջիկ ·
Ճիչ 'ւ աղաղակ ինքնին բառնայ
Գոչեալ ուժգին թէ «Ո՛հ անկայ» ։
Այո, անկար դարձեալ 'ի բանդ ·
Մանկիկդ, յերկիր յայս արգաւանդ ·
Եւ քո հոգի 'ի քուրձ անձուկ ·
Զերթ սըգաւոր ձնչի 'ի սուգ ։
Անկար 'ի բանդ դու մըթայեղձ ·
Թէպէտ ձըրագ վայելես մեծ ·

Այլ աչք հոգւոյդ ունի զլւրև,
Քօղ թանձրամած զմարմնոյդ կեղև։
Բայց մինչ մանկիկն կրկնէր զանկայ,
Հայրն 'ի գորով փղձկեալ ահա՛
Գայ փայփայէ զլւրըն մանկիկ,
Ողոք բանիւք առեալ 'ի գիրկ։
Եւ մայրն գգուէ յերեսս ծիծաղ,
Զ'յիշէ երկանց զահ և զաւաղ։
Այսպէս և մարդ արդարաճոխ,
Մինչ մերկանայ զմարմինն ոսոխ.
Թէպէտ խուն ինչ նա զարհուրի.
Ի շառաչմանց սարսափելի
Մահուն թեւոց սևափետուր.
Որ վրդովէ զոգի անդորր։
Այլ երկնաճեմ զօրք տարմաբար.
Լուսազգեցիկ դիմօք կայտառ,
Զնա հրաւիրեն յաւէժ 'ի փառս.
Արդարք կայտռին ուր հանապազ.
Եւ պերճ շեփորք նոցին յաւէտ,
Հնչեն ձայնիւ անդ րախաւէտ։
Եւ Ողիմպեան իշխանն հզօր.
Ցնծայ սրբոյն ընդ ծընունդ նոր։
Այսպէս հանգչի հոգին արդար.
Յեթերական շուքեղ կամար։

1866

ՍՄԲԱՏ, ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Աշ, Ա. Դասարանի



## ՀԱՆԳԻՍՏ ՅԱՒԻՏԵՆԻՑ

# ՏԵԱՌՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՌԱՋՆՈՅ

### ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ալեւորն Հայաստան մինչ զաչացն սրբէր վտակ,
Գգուելով զերթ Մովսէս զՕրինաց պերճ տախտակ,
Եւ որդիք իւր ողջոյն բազմամեայ մըթանիստ
Մինչ հազիւ տեսին զլոյս, ցնծային եւ 'ի ժպիտ։

Ահա՛ շռինդն յեղակարծ հնչեաց զոյժ քստմնափուշ,
Սեաւ շեփոր Հայրենեաց թրթռայ 'ի մեր յուշ,
«Ննջէ զքուն արդարոց Հայրապետն Մատթէոս,
Ո՛հ, թռեաւ հոգին վեհ յԱթոռոյն յՈղիմպոս»։

Հոսեցան Թորգոմայ ծորածոյ արտասուք.
Եւ զխո՞րդ ո՛չ ածցէ Այրարատ զնախկին սուգ.
Ի հրաժեշտ խանդակաթ Փեսային վեհափառ,
Որ յերկնից էր շնորհեալ Արամայ մըխիթար։

Պերճ Հովւին քաջարթուն առ 'ի սէր իւր հօտին,
Անանջատ յԱթոռոյն միշտ տքնէր առանձին.
Դէմք նորին շնորհալի ջինջ յալիս գեղահեր
Ակնածանս 'ի տեսողսն ներշնչէր և սուրբ սէր։

Բոյս բարուց էր 'ի նա ձիր երկնից շնորհագեղ,
Յոր պճնեալ Հովւին մեծ և յօտարս էր ահեղ.
Ջահ շողշող նորին ճառք, ոյց Տաճարք են վըկայ,
Տարրանայր 'ի սուրբ Յարկս զերթ Սանդուխքն Յակոբայ։

Ձայն նորին երկնանուէր զերթ սըրինգ հովուական
Հրաւիրէր զուխտին հօտ 'ի Դաւիթ Տէրունեան.
Այսպէս վեհ մեր Հովիւն պաշտպանէր իւր ըզհօտ.
Քանասար վոհմակացն 'ի ժանեաց մահահոտ:

Եւ Գըրիչն ոսկեկուռ դիմամարտ կարծեաց թիւր,
Պերճ արձան 'ի յերկրի հիմնարկէր յանուն իւր.
Զի անմահ կան վըկայ սրբասուն իւր Մատանց
Գործք ընտիր, և քարտէսք, և մատեանք գեղապանծ:

Նա 'ի դաշտս Հայրենեաց բարձրաբերձ զոդյես ծառ,
Ի Մասիս ծաւալէր զհովանին զովարար:
Յերախտեաց Հօրն վեհի վայելեաց և Զմիռնէ,
Քսան ամօք մինչ յառաջ յիւրն 'ի ծոց զնա զգուէ:

Յեղակարծ փայլակեաց կռոնոսեան ժանտ մանգաղ,
Եւ շիջոյց զԱրփին մեծ հէք Մասեաց մեր աւաղ:
Ամ'ուրեմն, Արարատ, զվաղեմիդ ա՛ռ դու սուգ,
Եւ Ցերկնից շիթք ամպոց ածցեն քեզ արտասուք:

Եւ որդւոյդ հէք շըթունք մնչեսցեն կոծ ու' աշխար
Ողբանուէր Մուսային Մելպոմեան 'ի քընար:
Իսկ դու, Հայր երջանիկ, որ 'ի մէնջ զերթ Եղիա,
Համբարձար հրեղինօք 'ի կամարն աստեղեայ,

Դարձի զաչսդ 'ի խոնարհ 'ի յորդիսդ սիրատենչ,
Որ կոծիմքս ընդ անդարձ անջատումն քո 'ի մէնջ:
Կարկառեա՛ զԱջդ օրհնեալ 'ի մայր մեր Հայաստան,
Ցոյր քարանց յարիցէ նոր մեզ Հայր քեզ արժան:

1866

ՍՄԲԱՏ, ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Աշ. Ա. Դասարանի



# Ի ՀԱՄԱՃԱՐԱԿՆ ԱԽՏ

ԳԱՐՈՒՆՆ 'ի մուտս մինչ խոնարհէր զերթ արփի,
Եւ կայր աշխարհ 'ի վերջալոյս Մայիսի,
Ո՛հ, տեսարան սարսափելի, զոռն Հարաւ
Յեղակարծում այլագունեալ նսեմացաւ:
Եւ կրճատէին ժանիք մահուն անդադար,
Կորզել ինքեանց ճարակ մարդկան ըղղումար.
Որոյ թեւոց սարսափելի շառաչիւն.
Ո՛հ, վրդովէր զոգիս անդորր մեր ողջոյն:
Երկիրս համայն ակնկառոյց անդ մընան
Առ 'ի բայէն ընդ քստմնելին տեսարան.
Իսկ 'ի ծըխալ համատարած մռայլին անդ.
Ահա վիշապն այն վիթխարի դժնեայ ախտ
Հանդերձեցաւ յայնժամ դիմել յԱրեւմուտ,
Եւ 'ի Հիւսիս բանականացըն 'ի կոյտ:
Ահ և սարսափ պատէ ըզսիրտըս մարդկան,
Եւ լըքանին ձեռք դողդոջունք աստ համայն:
Կէսք յուսահատ լան հառաչեն հանապազ.
Մինչ յուշ ածեն զայն չարադէպ պատուհաս:
Եւ կէսք ղօղեալք նստին 'ի տան և դողան.
Անդ կոծ ածեն 'ի դառն արտօսր անպայման:
Եւ այլ գումար նոր կազմեցաւ, հոյլք ծերոց,
Հանդերձ արամբք և կանանաւ ընդ տղայոց.
Յաճախէին մեհեանց ըզհետ պնդելով,
Յեկեղեցիս առ Բարձրելոյն 'ի կոլով:
Ի սոյն նուագ Եւրոպ ողջոյն պերճ աշխարհ,
Ընկղմեցաւ յալիս սըգոյն անմխիթար:

Զաճի հարաւ անդէն Վոսփոր կոստանդեան.
Փոխեաց ըղխինդ 'ի տխրութիւն դառնութեան:
Բայց մեր Զմիռնէ կեղատեսիլն օրիորդ
Մինչ 'ի Բակլիս բաղմէր ցաւոց անհաղորդ,
Ցանկարծ նորին դէմք կարմրագեղ դալկացաւ,
Անկէաւոյց այնպէս մընաց 'ի Հարաւ,
Զի նշմարէր զվիշապն առ ինքն ռահահորդ,
Յորմէ բուրէր խորշակ դժնեայ մահահոտ:
Էր դրոշմեալ մեծ գաղանին 'ի Ճակատ.
Տառ սեւաթոյր, "Ասիական եմ ես ախտ":
Եւ մինչ վիշապն առ 'ի Բակլիս մերձենայր,
Դարձոյց Զմիռնէ առ մեզ ըղդէմս իւր կայտառ:
Ընդ որ զմայլեալ որդիքս նորին անկեղծիկ.
Նոր աւետեաց մինչ մընայաք լուռ մնջիկ,
Աւա՜ղ, ահա՛ աշխարհալուր զայս ինչ գոյժ.
Կարդայր 'ի ձայն աղիողո՛րմ 'ի մեր ուշ:
«Այս չէ արկած ըստ պատահման, որ առ մեզ
Նա ծաւալի ընդ աշխարհիս ասպարէզ,
Այլ Ողիւմպեան վեհ Արքային պատժոյ սլաք,
Որ հարկանէ զկաճառ մարդկան զայս նըւագ:
Բա՛ւ է որ զկաթն ծըծէք ըստեանց իմ անմահ.
Ա՛ղէ ուրեմն, սիրուն որդի՛քս, առօրեայ
Խոյս տո՛ւք յօտարս դուք համախումբ 'ի ծոցէս.
Մինչև երկինք յայցելութիւն ելցեն մեզ":
Անդէն երկիր դղրդեցաւ 'ի հիմանց.
Եւ վեհն երկինք արտասուէին յայս արկած:
Նոր տեսարան, Զմիւռնացիք խմբովին,
Է որ ն'դ ցամաք, է որ ընդ ծով ծաւալին:
Իսկ Վիշապին հասեալ՝ հանդչի ուր Հոմեր,
Նա հասարակ ըղ մահ զերթ քոյ ներշնչէր:



Ասա տեսարան հանդիսանայ ահռելի,
Այր զընկերին դնէր զդիակն 'ի շիրմի:
Յայնժամ հնչէր Կրոնոսեան ժանտ մանգաղ
Ըզբանաւոր ըղդալարխս անյապաղ:
Իսկ ըԶմիռնէ լացըս հարեալ սաստկապէս,
Ա՜հ, գոգցես մայր որդեկորոյս խըղճէր զհերս:
Զայն հառաչոց բառնայր յՈղիւմպ ձեռամբարձ,
Կարդայ զերկին աղիողո՛րմ, "Տէ՛ր Աստուած,
Դու որ նստիս յեթերական 'ի կամար,
Եւ պահպանես զքո արարածս անդադար:
Դարձի՛ր 'ի մէնջ ըղբարկութեանդ պատուհաս,
Ընդ որ կոծեմ զքաջաց իմոց դառն օրհաս.
Կարկառեա՛ զԱջդ որպէս երբեմն ն'դ Առաքեալս,
Ի լեռնակոյտ յալիս յոր կան իմ որդեակքս":
Ի գութ հարաւ երկինք նորին 'ի մրմունջ,
Եւ այցելու 'ի թառամեալ ծաղկանց փունջ:
Անձրեւեցաւ ցօղ գըթութեան 'ի վերուստ.
Շիջոյց ըղհուր մեծ Վիշապին այն անգութ:
Յարեաւ Զմիռնէ 'ի նոր հոգի, և զվտակս
Աչաց սըբեալ յինքն հրաւիրէ զիւր որդեակս
Ի մայրական ծոց իւր մտանել վերստին,
Ողորմեցաւ քանզի մեզ Տէր լիովին:

ՍՄԲԱՏ, ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ

1866 Աշ. Ա. Տպարանէ

ՅԵՏԻՆ ՕՐԻՆՉ

# ՄԵԾԻՆ ՆԵՐՍԻՍԻ

ԴԸՂՐԴԷԻՆ ո՛չ չիւք նորդից բազմաստիփյուռ,
Կրցէր լեզուն Աստուածախօս 'ի քիմս իւր,
Եւ պաղպաջուն յալեաց գլորէր արտասուք
Մարգարտաձատ՝ և Հայաստան կայր 'ի սուգ։

Այլ մինչ քամբ'ր ներսէս մահու ըզդառն բաժակ,
Յուզուց հանէր զայս ինչ մրմունջ, թ' աւերակ՝
Կայցէ Մասիս, զոր դուշակէր յայտանշան,
Եւ բարբառէր ողբանուէր սուրբն 'ի ձայն։

«Ա՛հ... ո՞ր մատունք անագորուն զմահու դեղ,
Ինձ Հօրս արքայց որ մոյակէ զկենացս թել։
Դու, Պա՛պ արքայ, դու ապերախտ և անգութ,
Դու արարեր, դու դաւաճան զայս անշուշտ։

Բայց հեմ արդեօք, հեմ այդպէս, ո՛վ որդի ժանտ,
Դաղտագողի առնես զայդ ինձ իբր ըզվատ։
Ո՞չ դու արքայ Հայաստանի անարժան...
Ընդէ՞ր թողեր հանդչիլ սըրոյդ 'ի պատեան,

Կամ ո՞ր բախիզ զոռ գազանիդ արգել կայր,
Ամէհաբար յօշել պատառ զիս պատառ։
Ապերախտիդ 'ի ժանտ գըլուխ դառն անէծ,
Ո՛չինչ բաւեն որչափ կարդամ մեծամեծ։

Ըզքեզ կալցեն դըղորդք Երկրի տարմաբար,
Փոխան փառացդ լիցիս նոցա ստրուկ չուառ։
Անդ խուն ինչ լոյս մի՛ խիկ տեսցես 'ի սարսափ,
Մինչև նոցին քաջ երկաթոյն լիցիս ջամբ։



Աւա՜ղ, Երկինք ոչ յայսմ հետէ յԱյրարատ
Տեղացուսցեն ըզցօղ ըղթուլթեան յորդառատ։
Ոչ պանծասցի նա զերթ աշխարհ սիգապանծ.
Մի՛ զուարճասցէ յայլոց վերայ զերթ Աստուած։
Այլ եկեսցեն 'ի նա զայլոց մեծ խուժան.
Ընձուէք, Վայերք և մարդակերպ հրէշք դաժան,
Եւ ըզբեղուն այգւոյն քաղցրիկ զարգասիս
Ճարակեսցեն իբր հարազատըս որդիս։
Զկէս Տաճարաց Աստուածային թաւալգլոր
Տապալեսցեն այն բազմահրէշ դազանք զոռ։
Եւ զկէս նոցին փոխարկեսցեն 'ի մեհեան,
Ուր փոխանակ սուրբ Հրեշտակացն վերնական,
Սադայէլի դաս համախումբ շրջիցին,
Որք գից յարդանդ 'ի մահացուաց միշտ պաշտին։
Եւ — Ծ — անուն 'ի Ճակատէ Հայկական
Փոխարկեսցի — 'ի Հայ ցեղէ յաւիտեան։
Ասաց զայս Սուրբն, եհան զոգի իւր թեթեւ,
Որ ըզգեցաւ 'ի մթնոլորտս սրընթաց թեւ։
Թռեաւ յԵրկինս յաւերժական նա 'ի փառս,
Թողեալ և փառք Հայաստանի ընդ օտարս։

ՍՄԲԱՏ. ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ

1866 Աշ. Ա. Դասարանի

## Ի ՀՐԱՇԱԼԻ ԾՆՈՒՆԴ

# ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՊԱՏԷՐ զՊաղէստին գիշեր հասարակ,
Հովիւք զոչխարաց պահէին պառակ,
Յանկարծ 'ի վերուստ գունդք լուսեղինաց,
Խայտան աւետեն ցնծութեամբ՝ Հովուաց.
Ի ձայն երկնաշնորհ,
«Աւետիս ձեզ նոր։

Դուք միայն, հովիւք, ըզգիշեր ողջոյն,
Ըզհօտ սիրատենչ պահէք քաջարթուն։
Այսօր ձեզ ծնաւ Հովիւ աչալուրջ,
Հսկել ըզգառնուկսդ որ կայք յաղջամուղջ.
Մի՛ դուք երկնչիք,
Հայր եղեն երկինք։

Յերկնից եմք պատգամք ձեզ խնդից բանբեր,
Ծընաւ ձեզ Փրկիչ զոր Գուշակն նօթճէր։
Մօտ ձեզ ծընաւ Տէր, չ'են աւետքս 'ի զուր.
Տեսջիք դուք ըզնա 'ի շէնդ մօտաւոր.
Փակ 'ի խանձարուր,
Խոնարհ 'ի մըսուր»։

Ընդ ոլորտս թեթեւ սաւառնին յանկարծ,
Աւետաբեր գունդ Երկնային Զօրաց,
Սաւառնին արագ, ճախրեն օդապար,
Ի՛ անդուստ յերդ պարզին շեփորք տարմաբար։
Երգեն եւ խայտան,
Յանբանից խորան։



Հովիւք ազդ առեալ յաւետեաց նոցա,
Անդ մընան ապշեալ ն'դ տեսիլ դերակայ,
Մինչէին շրթունք յըմխմեանս, «Եղբա՛րք,
Զի՞նչ իցէ այս ո՛հ... երթիցո՛ւք եկա՛յք։
Խմբովին մինչ անդ,
Զոր Տէր ցոյց մեզ արդ»։

Չեւ մարդամատին սփռեալ ըղձաձանչ,
Ընդ այն տեսարան Հովիւք հիասքանչ,
Հոյլ հոյլ խուճապեն գնան սկայաքայլ,
Ուր Աստուածորդին ծընաւ հրաշափայլ։
Ընթանան արագ,
Պաշտելով Նըւագ։

Ի քնար 'ի տաւիղ 'ի սրինդ հովուական,
Հասին փութապէս յերջանիկն կայան,
Զոր աւետաբերն մատնանիշ արար,
Անդ տեսին ըզՏէր բազմեալ 'ի խոնարհ
Ի յարկ մի տամուկ,
Հինաւուրց Մանուկ։

Անդ երկրպագի Մանուկն 'ի հովուաց,
Տէր Երկնի ու' Երկրի մարդացեալ Աստուած.
Պաշտի Նորածինն եւ 'ի Սրովբէից,
Որպէս 'ի յԵրկինս՝ 'ի մսուրն անբանից,
Ուր զԱստուած Յիսուս,
Ծընաւ միշտ սուրբ Կոյս։

Արեգակն անդէն փարատէր զգիշեր,
Շողն իւր ոսկեփայլ նախկին՝ ողջունէր
Զերջանիկըն գիւղ, եւ թռչունք յեթեր,
Ճռուողեալ օրհնեն զԲղխմպեան ըզՏէր
Քաղցրալուր 'ի ձայն,
Զերթ կիթառ Որփեան։

«փառք քեզ, Եմարիչ, որ զխաւար աղջամ,
փարատեալ ծագես նոր մեզ առաւօտ»:
Անդ զունդք արփինեաց նոցին ձայնակից,
Երգէին ըղփառս 'ի բարձունս երկնից:
Քանզի էջ Աստուած,
Առ լիր արարած:

Այսպէս մինչ յաղօթս կային տարմարար,
փոխեցան լեզուք յաւետեաց բարբառ,
Գուշէին քաղցրիկ 'ի յունկըն մարդկան,
Ծընաւ աշխարհի Փրկիչ անհըման:
Զի խոնարհ Երկիր
Եղև տիրակիր:

ՍՄԲԱՏ, ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ

1866 Աշ. Ա. դասարանէ

---

## ԽՐԱԽՈՅՍ

# ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Ո՛հ, զի՞նչ է մարդ յաշխարհի, ոչի՞նչ ընդհատ յանսանոց,
Թէ վառիցէ ոչ 'ի սիրտ զիմաստութեան զանշէջ բոց:
Ա՛զէ, և զի՞նչ իցէ մեզ իմաստութիւն առ ընթեր,
Եակ էից երկնային, որդի լուսոյ անըստուեր:
Եւ զի՞նչ արդեօք գործք նորա, 'ի հարց մատեայց միսանդամ,
կամ 'ի սահման որոշի՞. խնդիր՝ ուր չի՞ք պատասխան:



Իմաստութի՛ւն,
Ո՞ւր քո փայլ,
«Ցանմահութիւն
Պարուրեալ»:

Սակայն և զի՞նչ իցէ ո՛հ, անմահութեանըն վե՞հ շուք,
Զոր Լոյսն անշէջ տացէ մեզ, մի՞ մեք այլ ևս ո՛չ մեռցուք:
Այո՛ մեռցուք զոլ անմահ, բայց ո՛չ այնպէս երկնային
Իմաստութիւն, զի անհուպ 'ի մահուանէ է բնաւին:
Զի մարդ այսօր կամ վաղիւ մեռցի ընդ իւրն յիշատակ,
Այլ իմաստնոյն յաշխարհի բորբոքեսցի մեծ կայծակ:
Իմաստութի՛ւն,
Ո՞ւր քո վերջ,
«Ի փառս անհունն,
Եւ յաւերժ»:

Ա՛զէ, և զի՞նչ իցեն փառք... ունայնութիւն սընոտի,
Բան որ 'ի շուրթս մարդկայնոց ո՛չ յաւիտեան մընջի:
կամ կոյտք ոսկւոյ, արծաթի որ առօրեայ բերեն փառս
Մարդոյն՝ և սուղ յետ ամաց ապականին 'ի փապարս:
Իմաստութեան փառք՝ միայն Աստուածատուրըն պարգև,
Մընայ անմահ յաւիտեան արեգական 'ի ստորև:
Իմաստութի՛ւն,
Ո՞ւր քո փայլ,
«Ցանմահութիւն
Պարուրեալ»:

Ողջո՛յն ընդ քեզ անձկալիդ Սողոմոնին, լոյս չքնաղ,
Ահա՛ քեզ նոր աշակերտ, ո՛ն ընկալ զիս անյապաղ:
Ընկա՛լ զհպեալս սուրբ լուսոյդ, ըստ հարից քեզ յաւէժ,
Տըգիտութեան յանդնդոց ա՛ծ զիս 'ի լոյսըդ անշէջ:
Սըն՛ո կաթամբըդ և զիս անմահութեան պապակիմ,
Ցայնժամ աշխարհ հարցանէ և խօսեսցի իմ շիրիմ:



ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Իմաստութիւն,
Ո՞ւր քո վերջ,
«Ի փառս անհուն,
Եւ յաւերժ»։

Շատ են բուրմունքդ անուշիկ, ո՜վ ծաղկաւէտ Բուրաստան.
Որ կառուցար տուն վարժից առ ափամբ ջուրց Մեղեսեան։
Ո՛չ գոգցես հոտ՝ առաջին դեռափթիթ քոց ծաղկանց
Միայն զոսկերս Հոմերի 'ի վեհ ներբողս խնկոտեաց,
Այլ և յափունս ծաւալեալ վեհ Վոսփորի գերակայ,
Ի քո ներբող հրապուրեաց զոսկի գրրիչ Վարագայ (*)։
Իմաստութիւն,
Ո՞ւր քո փայլ,
«Յանմահութիւն
Պարուրեալ»։

Այլ քաջուրեմն իմ քընար զիմաստութիւն լոյս երգեաց,
Քանզի աղօտ իսկ նորին շողն 'ի ծածուկ ո՛չ մընաց։
Հապա՛, եղբարք իմ սիրունք, 'ի գիտութիւն և յիմաստ,
Մի՛ խնայեսցուք ըզքրտունս մեր և ազգիս 'ի նըպաստ։
Աղէ՛, յերկնից մաղթեսցուք մեր ուսուցչաց զերկար կեանս,
Բայց մի՛ և զայն մոռասցուք ըզմեր օրհնել զովարանս (**)։
Զի գիտութիւն
Եւ իմաստ,
Պճնեն ըզմեզ
Անդ և աստ։

1866 ՍՄԲԱՏ, ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Աշ. Ա. Դասարանէ

(*) Վարագայը Հաւատիս ազգօգուտ Լրագիր 'ի Կ. Պօլիս։

(**) Ի շնորհակալութիւն առ Վարագայն յաղագս գովեստի զԱ. Տեսա-բակէն Մ[illegible]։



Իշխանք օդոյս այս ասպարիսացն,
Զհոգի սորա մի՛ արգելուցեն։
Շարական։

Զի՞ չքնաղ այս հանդէս որ սիրուն և տըխուր
Գայ աչաց իմ այսօր, դարձն 'ի հող սեւաթոյր
Մանկան, ո՛հ զի՞նչ տեսիլ զի շիրմին 'ի դուռն սեաւ,
Ցաւս արտօսր ըզհամբոյր հայր նորին 'ի մեծ ցաւ
Դըրոշմէ որդեկին 'ի վարդ այտս, և զողջոյն
Ըզ[illegible]եալին նուիրէ, «ո՜վ որդեակ իմ սիրուն,
Թէպէտ աստ առեր ո՛չ 'ի քո գլուխ 'ի քնքուշ
Զաշխարհի պարծանաց ըզ պըսակ դառն 'ի փուշ,
Զանթառամն անդ յերկինս բոլորեա՛ 'ի քո գլուխ,
Որով մեր սրբեսցի ծընողացս աչաց ուխ»։
Այլ հրեշտակք ցնծութեամբ մանկան սուրբ ընդ հոգւոյն,
Պարէին ըզշիրմաւ մինչ մարմինն գտցէ բոյն։
Գայր անդուստ յերեւան դունդ մի մեծ ահաւոր,
Սադայէլն ընդ իւրոց յարձակի յաչս խոժոռ։
«Զի՞նչ է այն, գոռայր Չարն, որ յունկն իմ գայ աստէն
Զայն նըւագ գոհութեան մահահոտն 'ի դաշտէն։
Բայց զի՞ է, զի զհոգւովդ մարդկային՝ բազմասփիւռ
Երկնաձեմք թըթռալեն ցուցս երգոց 'ի կայտիռ։
Հապա՛, քաջք իմ հուժկու, արի՛ք դուք 'ի բանակ,
Ընկճեցէ՛ք ըզգոսա, ձեզ լիցին նըշաւակ»։
Անդ առեալ վոհմակացն 'ի ձայնէն այն վայրագ,
Կազմեցին ն'դ դէմ նոցա աչաւոր մի բանակ։
Որ մաղլաւ սեւաթոյր, որ տեգօք հըրավառ,
Գուն գործեն վրդովել ըզչքնաղ նոցին պար։
Այլ անդուստ յեղակարծ երամոց երկնաձեմ
Շուրջ առեալ ըզհոգւոյն սաւառնին զուարթադէմ։

Սաւառնին 'ի յեթեր և տանին ընդ առաջ
Յիսուսի Քրիստոսի, որ կարկառ 'ի նա զԱՋ
Աստուածեան, և 'ի գլուխն բոլորեաց սուրբ պըսակ,
Զայն հնչեաց հրաշալի 'ի հրճուանս հրաւիրակ։
«Եկ, օրհնեալ դու մանուկ, եկ ըզփառս ժառանգեա,
Որ մինչև արարեալ իմ զաշխարհ պատրաստ կայ։
Եկ գտցես քում անձինդ փափկութիւն մշտնջեան,
Նըմանեօք քովք լցցի այս Գաւիթ Տէրունեան»։

1866 ՍՄԲԱՏ, ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Աշ. Ա. Դասարանի

# ՈՂԲ ԵՒԱՅԻ

Ի ջահիլ Արփենւոյն ըզչքնաղ առաւօտ.
Մայրն Եւա յուսահատ արտասուէր ձեռն 'ի ծնօտ։
Գայ անդուստ յերևան ջինջ 'ի դէմս Աբէլ հեզն,
Ցետկուսէ վայր լքեալ հիւսք վարսից փրփրադէղ։
Գայ Աբէլ և փարի ըզլանջօք մօրն քնքուշ,
Եւ մեղմիկ ասէ, «Մայր, զի՞ 'ի ձայն քստմնափուշ,
Կողկողեն քո շրթունք մըրրակած, ձեռն 'ի ծնօտ,
Որով յողբ խոկ լընուս զգեղեցիկ այս արօտ։
Մայր, ասա զի՞ է, զի դու ողորմ հառաչես,
Ասա, ո՛հ, զի ընդ քեզ վշտակից եղէց ես"։
Հառաչեաց միասանգամ մայրն յողորմ այս կական,
Զարտասուս 'ի յաչաց, և մրմունջս յոգւոյ հան։



«Եկ, որդեակ նազելի, նիստ 'ի գիրկս 'ի քնքուշ,
Լա՛ց և դու 'նդ եղկելույս, և բանիցս մատ՛ ուշ։
Գիտե՞ս դու, ո՛ Աբէլ, քանի՜ խոկ և քանի՜,
Արժան է ինձ կոծել զիմ վիճակ հիգալի։
Զի զմըրտաւ մինչ ածեմ զերջանիկ իմ աւուրս,
Եւ զարդի հէդ վիճակ, ա՛հ... ցաւ մեծ է հոգւոյս։
Քանզի ես վաղ երբեմն Աստուածեան 'ի յեդեմ,
Սիգայի դերապանծ 'ի պաճարս առեալ ճեմ։
Անդ էին ծառք բազումք, զորոց ետ հրաման,
Տէր Աստուած, ըզխայրիս ըմբոշխնել համադամ։
Այլ զծառոյն գիտութեանըն բարւոյ և չարի,
Որ տնկեալ կայր յեդեմ, պատուիրեաց ուտել մի,
Զի գուցէ ընդ նորին և զմահ ճաշակեմք։
Եւ մինչդեռ յայն պատուէր Տէրունեան մնայաք մեք,
Հոյլք Երկնից Զուարթնոց դայէն միշտ այցելու,
Պարակից մեզ լինել սրբասացն յալէլու։
Զի՞նչ հրճուանս կրէաք մեք 'ի սիրտ փափկասուն,
Ճեմ առեալ ն'դ աղբերօք արծաթի պաղպաջուն։
Տիրատունկ ընդ ծառովք մեք զերեարս զգուէաք,
Ի' 'ի ծաղկանց հայր քոյին բոլորէր ըզպըսակ
Իմ 'ի գլուխ երջանիկ յոր պճնեալ 'ի Դրախտին,
Գեղ զիմացըս մոգէր զաղանաց զամէհին։
Անդ 'ի զահ գերամբարձ մեր բազմեալ սիգապանծ,
Այս զազանք՝ զորս, Ա՛բէլ, տեսանես մարդախանձ,
Հեզ էին բընութեամբ, էր նոցա և գորով,
Հուպ եկեալ քծնէին մեր զոտիւք փարելով։
Այսպէս լի հրճուէի ընդ հօր քում Ադամայ,
Ի տեսիլ հոլովման Արփենւոյն ոսկեկայ,
Չէր խաւար թախծութեան, ո՛չ տըքուն անդ գիշեր,
Զի լուսին 'ի լերանց 'ի բարձանց ողջունէր

Ըզ Տիգրիս և զԵփրատ բղխէին որք յաւէտ
Պաղպաջուն, Աստուածեան ’ի վայրէն ծաղկաւէտ,
Եւ զՓիսոն շնչէր միշտ յօթևանն այն չքնաղ.
Ճօճային վէտ ’ի վէտ ջուրք նոցա ’ի ծիծաղ։
Առ վայրօքն գեղազուարճ հեղաւ յիս թմբրութիւն,
Զիս և զիմըս Ադամ պաշարեաց անոյշ քուն։
Ի լերանց գագաթունս առաւօտն վարդագոյն,
Կարապետ ոսկեկայ շառաւղաց Արփենւոյն,
Տեղ լուսոյ ’ի վերայ տեղայր անդ զուարթագին,
Ցօղ գիշեր խոյս տալով շողշողէր ջինջ տեղին։
Այսպէս զիմ ըղձակատ ողջունէր Արփենին,
Եւ Զուարթունք շուրջ զինեւ ըզնըւագ պաշտէին։
Ընդ նոսին և կարկաջք հնչէին վտակաց,
Ի Դրախտին փափկութեան հեշտարար լսելեաց,
Յորոց սիրտ իմ փափկիկ ըզգացեալ և ահա՛,
Ի քընոյ անուշակ բերկրութեամբ ես զարթեայ։
Մինչև ցարդ, ո՛ Աբէլ, որդեակ իմ նազելի,
Զիմ նախկին ըզվիճակ քեզ համայն պատմեցի։
Բայց այժմիկ վիպեցից զոր լսել իղձ լինիս,
Ըզգըրգոյ զարտասուաց, զի լացցես դու ընդ իս։
Անիծեա՛լ էր ինձ օրն, ժամ սըգոյ, վայրկեան սեաւ,
Յոր Արեգն ’ի լերանց ’ի բարձանց ծագեցաւ։
Զի մինչ ես առ ափամբ աղբերաց ճեմէի,
Գայր անդուստ առ ունկն իմ շշնչիւն մի օձի։
Ի ծաղկունս կայր լարեալ մահագոյն որոգայթ,
Ճեմ առնոյր ն’դ հովանեաւ վեհ մայրեաց Օձն անյայտ,
Մերթ ’ի թուփս թաքթաքուր՝ մերթ ’ի ճօճ խոռխտաբար,
Գայր առ իս և խօսէր մարդկային ’ի բարբառ։
Հրապուրեալ բարբառնօք զիս էած սիգազգեաց,
Մեծաստատ արգելեալ յայն ’ի ծառըն չարեաց։



Որոյ դառն ճաշակաց ջամբ եմոյծ յաշխարհ զմահ,
Արկ և զիս ’ի փառացս ու՛ ’ի Դրախտէն Եդեմայ։
Անդ եկաց Օձ սատան և ’ի ձայն ’ի պակշոտ,
Ինձ նօթճէր նենգութեամբ ըզմրգոյն մահահոտ։
Յորոյ բանսն ըզմայլեալ գիւրախաբըս Եւա,
Ընդ մրգոյն ժանտաբեր ըմբոշխնեալ և զմահ։
Կլթեցի ’ի ծառոյն և կերայ, ո՛հ... աւա՜ղ...
Ի՞բըր ես խաբեցայ ’ի պտղոյն տիպ չքնաղ։
Եւ տարեալ ’ի նմանէ առ Ադամ քոյին Հայր,
Զամբեցի և նըմա զդառըն մահ հիքաբար։
Այլ անդէն յունկըն մեր գոռաց շռինդն յեղակարծ,
«Ո՞ւր, Ադա՛մ, ո՞ւր ես դու», ձայն հնչէր ’ի բարձանց
«Հի՞մ զօղես յերեսաց Աստուծոյս դու ’ի պախ,
Իմ բազմիցս աստ եկեալ գտանէի զքեզ ուրախ։
Բերկրանօք և ժըպիտ ’ի քո դէմսդ դիմէիր,
Այցելուիս քեզ, Ադա՛մ, և տեղւոյս բերկրալիր։
Իսկ այժմ զի՞նչ տեսանեմ ընդ ծառովքդ փառաւոր,
Հի՞մ զօղես ընդ քնքուշ զուգակցիդ ակնկոր։
Կերա՞ր ո՛հ, ըզծառոյն ըզխայրին մահաբեր,
Ո՛վ դու վա՛տ, զիմ արգել ըզմըտաւ ո՞չ ածեր։
Փոխանակ զի անցեր զհրամանաւս զանց առեալ,
Հապա՛ ե՛լ ’ի Դրախտէս փափկութեան գեղափայլ։
Եւ թռչունք և գազանք հրճուեսցին յայս կայան,
Եւ ըզմրգս փոխան քո կերիցեն համադամ։
Ե՛լ աստի և անկցիս ’ի յերկիր դու խոպան,
Որ տայցէ քեզ տատասկ և ըզփուշ յաւիտեան։
Ե՛լ ըզմահ ճաշակեա՛, ո՛վ Երկնից անպատուող,
Եւ զի հող էիր նախ, դարձցիս այժմ ’ի նոյն հող»։
Այս գունակ զամօթի հարեալ մեք ’ի նանիր,
Ակնկոր ո՛հ անկաք յանիծից յայս Երկիր։

Ուր աղէտք մահաբեր զոր կրեմք անքըթիթ ,
Գիտեն քաջ քեզ յայտնել զիմ ողբոց մեծ առիթ ։

ՍՄԲԱՏ , ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ

1866 Աշ. Ա. [illegible]

# ՍՓՈՓԱՆՔ ՆՈՐՈՅ ՏԱՐՒՈՅ

ԳԻՇԵՐ տխրանուէր պատէր 'նդ ոլորտս կիսագնդին ,
Եւ լուսին արծաթափայլ նոր իմն առեալ կերպարան ,
Ընդ ամպս սեւաթորմի զոյգես նուաղեալ տայր լոյս 'ի սուգ
Եւ կիւբեղէ յառիւծուց լծեալ 'ի կառսըն անդ բազմէր,
Ո՛չ 'ի պաճուճանս , ո՛չ 'ի կառացն շըքեղութիւն ,
Ո՛չ 'ի գեղ դիմաց իւրոց պանծայր անմահ Դիցուհին ։
Բրգաձեւ թագն առ ոտիւքն վարսք ոսկեթել յետկուսէ
Լքեալ ցրւեալ և ձեռն 'ի ծնօտն յաչացն հրացայտ
Ընդ այտսն վարդակարմիր գլորէր արտօսր մարգարտահատ ,
Ուր ննջէն հարուածեալքն 'ի Վիշապէն համաճարակ ,
Որոց աճեղ և ուրուականքն շուրջ ըզնովաւ կան թափառիկք
Այսպէս սուգ ծանրաթախիծ տիրէր յերկիր առ հասարակ ։
Ընդուստ շառաւիղք քրքմահանդերձ Արշալուսոյն ,
Հանդերձէին զօրակըշիռ դահ լուսատարր Արքային ։
Յերեւան գայր աշխարհի Ապողոնին Առաջնորդ ,
Արշալոյս զուարթադէմ չքնաղ տարւոյն նորածին ։
Սակայն զի՞նչ նա տեսանէ , աղիողո՛րմ տեսարան ,
Տեսարա՛ն քստմնասարսուռ հարաւ աչացըն լուսարձակ ։



Ազգ մարդկան ընդ կիւբեղեայ ընդ սեաւ նօճւովք սըգատերեւ ,
Ի սուրբ Դաշտնկայրավատինք անդ կողկողէն 'ի գերարտօսր ։
Են որ զորդեակսըն սիրասուն արտասուազող աշխարհեն ,
Ջօրէն ծաղկանց նոննենեայ հնձեալս 'ի խոփ մեծ ախտին ։
Եւ այլ ոք սիրուն փեսայ իւր լծակցին հարսին քնքուշ ,
Փարի պշրմաւ և ծաւալէ զնովաւ ծաղկունս համբուրեան ,
Հառաչէ՛ կողկողագին , «ո՛վ սիրուհե՛դ իմ կենակից ,
Ո՛հ , ընդէ՞ր թափուր կայի ես յԱրեւուդ ճառագայթից» ։
Տեսարան այլ ևս ողորմ , խմբեակ որբոց և այրեաց ,
Գոչէ ումն , «Եղո՛ւկ է ինձ , ո՞ւր է մայր իմ , ո՞ւր է հայր» ։
Ամենեքին ձեռն 'ի ծընօտն հեղուն արտօսր 'ի ցուրտ դամբանս ,
Ըզմահ անիծանեն և առ Երկինս բառնան բողոք ։
Այսպէս դաշտն կականալից գետս արտասուաց հեղեղատէր ,
Ձայն հառաչացն հիզալեաց ըզ վեհ նօճիս սըգանշան ,
Եւ ըզլերինս բարձրայօնս պակուցանէր համախըռով ։
Ողիք համայն վըդովէին , սիրտք լընուին դառնութեամբ ։
Քընար տըխուր Մելպոմենեան լացս հարկանէր՝ այլ վըսեմ ,
Ո՛չ զոյր անդ ըսփոփութիւն , և ո՛չ ուստեք փարաւագք ։
Ապշեցան միտք լուսածըլոյն և 'ի յաչացըն կապուտակ ,
Շաղ մարգարտի բիւրաբեղուն ցօղէր 'ի դաշտն ամենափիւռ ,
Որով բոյսք և սէզք երկրին նոր ըզգեցան կենդանութիւն ,
Ծաղկունք և զալարիք հոյխայան գեղազուարթ ։
Նա 'ի ձայն աւետաբեր սփոփէր զամբոխն և զԴիցուհին ,
Սրբէր զցօղս աչաց նոցին և բան խօսէր զայս գունակ ։
«Ողջո՛յն ընդ քեզ , անթափանցիկ Գունտ աստրական մե-
ծամարմին ,
Ահա՛ գամ ես Նոր Տարի , ողջո՛յն և ձեզ ազգդ մահացուաց ,
Որ հարուածոյ տարայք ախտին համաճարակ մաղձացաւոյն ,
Ըսփոփեսջիք , ո՛չ մի՛ այլ ևս վիշապն ելցէ ձեզ 'ի յայց ։
Այն որ յափանցն Գանգէսի ընդ Բիրամիտս և ընդ Սփինքս ,

Ընդ գեղեցիկն ըԶմիւռնիա և ընդ վեսեմըն Վոսփոր,
Յողոսկելով տուտն երկայնեաց մինչև յալիս Ատլանդականս։
Ի հարաւոյ ցըհիւսիս ժայթքեաց ըղթոյն մահաբոյր,
Անմարդացոյց տունս բազումս, ելից զերկիր որբովք և այրեօք։
Հոլովեցան անիւք հընոյ Տարւոյն սահեալ թռեաւ անդարձ։
Ամանորս բարենըշան ահա՛ գամ ձեզ աւետել,
Նոր շըջան բարեբաստիկ ժամանակի ածցեն Երկինք,
Գեղածիծաղ ձեզ ժպտեսցի քաղցրահայեացըն ըղձութիւն։
Եւ 'ի քեզ. ո՛վ Դիցուհիդ, ցօղեալ աչաց շաղք մարգարտեայ,
Բուսուսցեն քոյդ յարգանդէ բոյս տոհմական ատոքհատ։
Ո՛չ 'ի սնունդս Չկանց, Խոյոց Տանուտէրանց նախորդն ամաց,
Այլ Ցըլուն, որ ուղեկից եղև այսօր ինձ անբաժան,
Որոյ Եղջիւրք ըղխեսցեն առատութիւն գեղանսիկ։
Լըցուսցեն և ճոխութեամբ ըղհերմեսին ըղբաշակ։
Եւ փոխան աղետաբեր աւուրցն գացես երջանկութիւն,
Ջարտասուս փոխանակեալ հրճուանք 'ի դէմդ անթառամոտ,
Բերկրեսցիս լիաբաղդիկ սրբեալ զարտօսր դառնահամբոյր,
Եւ օրհնեսցես զԱջն որ յԵրկնից մերթ ապտակէ մերթ գգուէ։

ՍՄԲԱՏ. ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ

1866 Աշ. Ա. Պատարունի

# ԹՇՈՒԱՌ ՀԱՅ

Եւ զի՞, ո՛վ Հա՛յ, վե՜հ երբեմն դու քան զողջոյն Հիւսիսայինս,
Այս 'ի խոնարհ յերես երկրի զերթ դալարի,



Որ սաստկապէս հարուածեալ 'ի խորշակէն ժահահոտ,
Գալկահար տժգունի վարդակարմիր դեղ դիմաց։
Եւ կամ թաւալեալ գլուխ 'ի կոր մընայ 'ի դաշտն,
Մինչև Երկին ելցէ նըմա յամպն այցելու զովացուցիչ։
Եւ ընդէ՞ր, ո՛վ Քաջդ Հայ, այս պանծալի քոյին անուն,
Փոխանակեալ յանուն ջէրբ, այժմիկ կոչիս Թշուառ Հայ։
Ո՛չ այլ ինչ հիղութեանդ և կամ վշտացդ լիցէ պատճառ,
Բայց միայն խէթ, ատելութիւն, օտարամուտ բոյս բարուց,
Որք ժանեօքն մահահոտ խայթելով մահ քեզ հաղորդեն,
Եւ 'ի փառացդ գահավիժեն յանել բաւիղն դժոխոց։
Ատելութիւն որ գրգռեաց 'ի քեզ զցասումըն արդար
Բարձրելոյն, որպէս երբեմն 'ի փափկութեան Դըրախտին,
Խոնարհեցաւ անդ Երկին և ձայն հնչեաց այս զունակ։
«Ադամ, ո՞ւր ես, ո՜հ բարբառ քստմնասարսուռ, ձայն տըրտմութեան,
Ո՛ ապերախտ, հի՞մ ըզպատուէր չ'ածեր զմըտաւ Աստուծոյս։
Ե՛լ 'ի տեղւոյս բերկրանաց, ահա՛ քեզ մահ ըսպառնայ։
Եւ թուչունք և գազանք թո՛ղ բերկրեսցին աստ փոխան քո»։
Այսպէս և քեզ, Թշուառ Հա՛յ, հնչեաց նա ձայն քստմնափուշ։
«Ո՞ւր ես, Հա՛յ, յո՞ր յալիս ընկղմեցար արտմութեան,
Հի՞մ փառացըդ պերճութիւն նըսեմացան ա՛հ խոպառ,
Եւ Արփենեացդ ոսկի ճաճանչք․ .ոյց հետք անգամ չ'երևին,
Ո՛վ Թշուառական, ծառա՛յ չար և վատթար,
Յանցեա՞ր արդեօք զպատուիրանաւս զոր քեզ յաւէտ պատուիրէի,
— Սիրեցէ՛ք զմիմեանս, որպէս և ես սիրեցի զձեզ—
Հապա՛ ե՛լ աստի, ո՛վ դու Երկնից անպատուող,
Ե՛լ, և փոխան քոյին փառաց, երից ահեղ պետութեանց,
Ընդ լծով կացցես մինչև կոյտք մեղանացըդ քաւեսցին։
Եւ 'ի վայրդ սրբասահման փոխանակ քո, ապերախտ Հա՛յ,
Ազատաճեմ նազեսցին ազգք և ազինք այլ կորովիք»։

Այսպէս ատելութիւն ընդ քեզ 'ի դէմս ամօթալից,
Առ դուրս արտաքսեաց 'ի Հայրենեացդ բուրաստանէն.
Ուր երբեմըն քայլեաց Հայ Դիւցազունն Աքիլլէս,
Ընդ իւրըն Ուլիսեայ, Հայկ ախոյեան և Արամ։
Զորոյ երբեմըն զօդ շնչեաց երկրորդ Սամփսոն աշխարհի,
Սարսափն Հռովմայ պարծանք Մասեաց մեծ Միհրդատ։
Որոյ կաթամբն և սընաւ սարսիչ վիմաց ապառաժից,
Ընդդըկող աւազանին Ռուբէն աշխոյժ երիտասարդ։
Յորոց զուրկ, և վշտակիր նըստիս յերկիրդ 'ի խոպան,
Յորմէ երկամբք և դառն քրտամբք հազիւ քաղես ընփուշ
տատասկ։
Զերթ նախահայրըն Ադամ արտասուաղոչ հեծելով,
Ի բացուստ տես երանի գոռ գաղանաց և թռչնոց,
Որոց տարմաբար ընդ Հայրենիսդ Հայաստան,
Հարեալ առաթուր քաղեն զխայրիս այգւոյն բեղուն։
Բայց Ադամ ընդ համօրէն շրջան կենացըն իւրոց,
Զղջման դառն արտասուս գետահեղեալ անցուցանէր,
Իսկ դու, Հա՛յ, կաս տաժաւին յատելութեան խաւար ան-
դունդս,
Զոր կարապետ քեզ կարգելով յանդունդս դժոխոց ժամանես,
Ո՛ ատելութիւն, ո՛ բընութիւն դըժոխային։
Յորմէ Երկին 'ի վերուստ՝ Երկիր ատէն սարսափի։
Մի՛ այլ շատ, ո՛վ իմ քընար մի՛ աղէխարշ 'ի սիրտ Հայոյն,
Զայնիւդ հեծեծանաց լացըս հարեալ շնչէր սեաւ ծուխ։
Մի՛ կոծ և աշխարումն թրթրակելով յունկըն նորին,
Ցաւ ածցես ցաւ կարեվէր 'ի հէգ հոգին ցաւահոծ։
Այլ երգեա՛ ըսփոփութիւն, յորդորակ, յոյս երջանկութեան,
Թէպէտ և մատն է անզօր որ զքընարդ հարկանէ։
Ո՛վ Հա՛յ տառապեալ, դու բազմամեայ մըթանիստ,
Եւ թափուր Աստուածային 'ի շընորհաց և 'ի խնամոց,



Քա՛ւ, ո՛չ ընդ քեզ Արքայն Երկնից 'ի յաւիտեան մոռանայ,
Մինչդեռ դու արտասուալի՛ր առ գութ նորին դիմեսցես,
Անկեալ առ ոտս ճըլալով որպէս որդին անառակ,
«Հա՛յր, մեղա՛յ յերկինս և առաջի Աստուածութեանդ»։
Մի՛ շիջցի Հուրըն Աստուածեան, ո՛վ սիրելի՛դ իմ 'ի քեզ,
Մի՛ նորին սուրբ պատուիրանք քեզ մոռացօնք լինիցին։
Ի չուառ քում վիճակիդ մի՛ զխրտուցնս արդար երկնից,
Եւ ընդ քո յանցանս ժխտեր, քանզի ծանունք են յաւիտեան։
Մի՛ այդպէս ճիչ հեծեծանաց ողբս և կականս և բողոք,
Ի սրտէդ ցաւահոծ մի՛ առ Երկինս դու բառնար։
Ո՛չ վայրապար ծընանին ցաւք, ո՛չ 'ի քարանց բուսանին վիշտք,
Ո՛չ 'ի զուր պատէ 'նդ երեսդ սուգ տրտմութեան ծանրաթախիծ,
Այլ մարդ յաղէտս՝ և անասունք 'ի դառն տանջանս ծընանին։
Հապա՛ ընդ Տէր ամենեցուն և զքաղցըր գութ նորին կարդա՛,
Որ գըթած է և ողորմած 'ի յարարածս իւր ձեռակերտ։
Որ ընդ ճաշակ երջանկութեան ջամբէ սիրով հիգացելոյն։
Որ անձրև արբուցանէ կենդանութեան բուսոց անկոց։
Որ ընդ չարաց խորհուրդս պուղէ յանգոյ, և մի՛ յաջողեսցին։
Եւ զԵրկինս առնէ խոնարհ և ընխոնարհս վերականգնէ,
Նահատակ հանդիսացի՛ր անմահ Սիրոյն Քրիստոսի.
Եւ փոխան հրապուրանաց ատելութեան վիշապին,
Սէր զուարթատեսիլ, այն սուրբ ճաճանչն արփիանման
Ուղղեսցէ զդնացս քո 'ի պողոտայն երջանկութեան։
Նահատակ լե՛ր Գիտութեան, և Երկնային Իմաստութեան,
Եւ Պըսակն արդարութեան քեզ անթառամ մընայ յԵրկինս։
Նահատակ և մարտադիր վասն Հայրենի աշխարհին,
Նահատակ և հալածիչ լե՛ր պժտութեանց խակամիտ,
Ցայնժամ 'ի քեզ հաստարմատ բողբոջեսցի խաղաղութիւն։

1866

ՍՄԲԱՏ, ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Աշ. Ա. Դասարանէ

## ԱՍՏՂ ԱՌԱՒՕՏԵԱՆ

ԱՐՈՒՍԵԱ՛Կ.
Առաւօտեան նըշանակ։
Դու պայծառ
Հարիւրաչեայն 'ի կաճառ։
Քո անուն
Տեղերաց է սիրուն։
Քև գիշեր
Փարատի և իմ ցաւեր։
Քո ծաղման
Այգածաղկունք կան մընան։
Զքեզ բաղձայ
Որ 'ի գիշեր տըքուն կայ։
Ի բացէ՝
Ցնծայ՝ ըղձէմսդ մինչ տեսցէ։
Այսպէս և
Հոգիս կաւեայ ընդ կեղև։
Իղձ լինի
Ցաւերժականըն Երկնի։
Տեսանել
Լուսեղինացն մուտ և ել։

ՍՄԲԱՏ, ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ

1866 Աշ. Ա. դասարանի



## Ի ՄԱՅՐՆ ՄԵՐ

## Ս. ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՈՂՋՈ՛ՅՆ ընդ քեզ, մայրիկ սիրուն սուրբ Մեսրոպեան վարժարան։
Զի՞ գեղեցիկ դու տարածեալ սիրուն զթիսդ աննման,
Քաղցրահամբոյր կոչես ձայնիւ զորդիս Հայկայ գեղամոյն,
«Եկայք ուխտաւորք իմ բանեղէնք, եկայք 'ի ծոցս բազմարդիւն։
Կաթն լուսոյ արբէք յինէն, ողեպարար տամ ձեզ կաթն,
Որ յորդահոս գետահետի 'ի ստեանց իմոց անարատ»։
Ահա ես, ո՛վ սիրելիդ իմ, պերճըդ Միներվ, ահա ես
Խրախուսեալ 'ի կոչմանէդ արդ հաճութեամբ գամ առ քեզ։
Եօթըն գարունք զինև անցեալ ես 'ի քո ծոց անկանիմ,
Ընկա՛լ մաղթեմ և զապիկարս 'ի դաս սանուցդ կաթոգին,
Ցանչէջ քո ջահ առաջնորդեա՛ 'ի Պողոտայն վեհ լուսոյ,
ԶԱստուած օրհնել, և ճանաչել զփառս նորա, ինձ ուսո՛։
Ահա 'ի քո ես յասպարէզ կաքաւելով իսկ մտի,
Ուր համատի ինձ մանկտւոյ գումար սիրուն տաւաղի։
Որք 'ի բարբառ միշտ դողդոջուն առ քեզ գոչեն, ո՛վ մայրիկ,
Մեզ համադամ տուր կերակուր 'ւ ուսո՛ զաշխարհ մեր բնիկ։
Նախ յիմաստից 'ի խանձարուր ուսայ հեգել Այբ Բեն Գիմ
Ի յընկերաց խնդրել նպաստ «զի՞նչ ձայն տառիս» եղբարք իմ։
Զի են 'ի ծոցդ հեզահամբոյր և հայրագութ մեզ հովիւք,
Որք զսանուցդ խնամելով երջանկութեան տան մեզ սիւք։
Կրկնեմ դարձեալ, ողջո՛յն ընդ քեզ, գորովագութ, ո՛ պերճ կոյս,
Ցոյց և ուսո՛ զհայկական վեհ բարբառոյն տո՛ւր ինձ լոյս,
Ցոր 'ի նախնումն Աստուածն երկնի ընդ Ադամայ խօսէր բան

Ի սուրբ դրախտին ուր նախաստեղծք վայելէին 'ի խրախճան։
Աստ իմ աչաց դիպան պատկերք նախ պերճ տաուիցըն Հայկայ,
Զոր իմ ուսեալ յետ ոչ բազմաց ամայ 'ի սրահն գերակայ,
Ուր յանկարծուստ զվեհ պատկեր յակըն արկեալ Մեսրոպայ
Որ զիս կոչէր զոգցես սիրով, եկ որդեակ իմ և աճա։
Խրախուսեցայ 'ի վեհ դիմացն, ես յասպարէզ իմաստից
Մտեալ կրցորդ հասակակից եղբարց բազմաց դասակից,
Զդէմ ունել տղխութեան հեղի ճգունս աննկուն,
Անցին զարունք հնդեակ, և կամ յայս դասարան դերադոյն։
Ուր յակն արկեալ ճարտարախօս զվեհ Հերմէս ըզկայտառ
Որ ոսկեձոյլ շղթայ սիրուն 'ի բերանոյն կախեալ կայր,
Թեպէտ շղթայ նշանակ է բռնաւորաց վատութեան,
Սակայն շղթայն պերճ Հերմէսեան չէր ինձ երկիւղ Պանական։
Զի սիրոյ էր պերճն այն շղթայ գեղեցկահիւսըն ոսկի,
Որ հըրաւէր տայ մեզ մարդկան յերջանկութեան լոյս արհի։
Ուրեմն արկի զանձն իմ կայտառ 'ի գոգ մեծին Հերմէսի
Անկայ 'նդ ոտիւքն, և նա ճարտար պատմեաց ըզդէպս միառ մի։
Ի յասպարէզս, ասէ, բազումք յաղթութեան դրօշ 'ի ձեռին
Վերկենցաղեալ՝ ըզդժնեայ զատ տղխութեան բա՛ հարին,
Ցերթալն 'ի սփիւռս ուրախութեամբ ետուն զողջոյն ինձ վերջին
Կոխան ոտից հարկանելով զգլուխ դժնեայ գազանին։
Ցայն 'ի ձայնէ քո առաւել խրախուսեցայ ես աստէն
Գալ զգըրովք, հիւսել ճարտար շղթայ ոսկի պերճ հիւկէն։
Ուրեմն, եղբարք, անհրաժեշտ պարտ և պատշաճ է մեզ յար
Միշտ զհեհովայն զովել օրհնել 'ի դողդոջիւն մեր բարբառ։
Որ մերթ ընդ մերթ մեզ շնորհեալ է բարերարս աննման,
Որք 'ի մարզել ըզմիտս մեր կառուցեալ են վարժարան։
Ուստի յաւէտ անջինջ կացցէ նոցին շըքեղ յիշատակ
Ի մեր 'ի սիրտս ոսկեքանդակ դրօշմեալ ցըմահ անսայթաք։

ԱՐԱՄ, ՍԱՐԳԻՍ Կ. ԴՈՒԹԵԱՆ

1866 Աշ. Ա. Դասարանէ



# Ի ՀԱՄԲԱՃԱՐԱԿ ԱԽՏՆ

Ո՛հ, առ 'ի մէ՞ Զմիւռնիա շքեղազարդ վեհ քաղաք
Կայ տրտմագդեաց և կորակոր, և թառամեալ իւր պըսակ,
Զիա՞րդ Բակխոս ձեռն 'ի ծնօտն ողբայ յաւերժ լալագին,
Զի Սատուռնոս մշտապատրաստ մանգաղ հատու 'ի ձեռին
Կամի բնաջինջ առնել զմարդիկ, տայ ցաւալի կոտորած,
Թոյն նա սփռէ վերայ մարդկան։ Զինչ տրտմութիւն 'ի մեզ ած։
Զմիւռնիայ 'ի Բակխուսէ ձայն տայ որդւոցն այս զունակ,
«Խոյս տուք հեռի սիրելիք իմ 'ի ծոցէս ինչ ժամանակ,
Քանզի զօռ ախտն Ասիական զերծ ըզվիշապ ահարկու
Ցափշտակէ յանմեղ հօտէն, մատնէ ճարակ նա մահու.
Ցրուէ զորդիս 'ի յարևելս, կէսքն 'ի հիւսիս թափառին,
Մինչև շիջցի դառըն վըրէժ ամենակուլ վիշապին»։
Վեհ օրիորդն կայր նիստ առեալ 'ի վեհ դամբան Հոմերին
Իբր զվտակ հոսէր արտօսր չքնաղ յաչացըն նորին,
Գոչէր ձայնիւ աղերսալի զորովագութըն պերճ կոյս,
«Ե՞րբ եղիցի զձեզ տեսանել», ասէր և տայր խըրախոյս։
«Միթէ ըընաւ և յաւիտեան անմխիթար կայցեմ ես,
Ո՛հ գըթացէք զի եմ լցեալ ցաւովք բազում և պէս պէս,
Քանզի յորդւոցս բազումք եղեն ճարակ ժանեաց գազանին
Եւ կորակոր 'ի սուգ թախից 'ւ անմխիթար զիս թողին»։
Մինչ զայս խօսէր պերճն օրիորդ ուրախութիւն մեզ յերկնից
Ուրախութիւն գոչեն մարդիկ դադարի մահ և կսկիծ,
Չքնաղըն կոյս Զմիւռնիա տայ վերջ լալեաց և ողբոց
Տեսանելով զորդիս իւր վեհ որք հոյլ 'ի հոյլ գան յիւր ծոց։
Կապարճ աղեղն պերճ իւր 'ի յուս անդ տայ հարուած խիստ
ուժգին
Ի լանջ աշեղ նետ շէշտակի դիպուցանէ վիշապին,

Կանգնեն որդիք Զմիւռնիոյ ծիրանափայլ գեղ գրօշակ
Ցորոյ վերայ տառք ոսկեղէն վերծանին զայս օրինակ։
Ուրախութի՛ւն, ուրախութի՛ւն, որդիք պերճ տան Հոմերի,
Կործանեցաւ գոռ այն գազան, ահ և սարսափ ամէնի։
Ապա եղբարք աղէ ուրեմն օրհնել զերկնից վեհ Արքայն,
Որ զմեզ փրկեաց 'ի ժանտ մագլաց գոռ վիշապին եօթնաչեան։
Օրհնել նաև միշտ անդադար Գեր Արարչին վեհ զանուն
Մինչև ցկէտ սակաւատև կենաց մերոց անկայուն։
Ո՛վ Արարիչ դու մահացուաց և բընաւից վեհ Արքար,
Որ միշտ 'ի սուրբս՝ յեթերականն հանգչիս կամար Աստեղեայ,
Որ 'ի Կարմիր յանհուն ծովու դու հրեղէն ամպովք լի
Իսրայէլի ցուցեր որդւոց լայն պողոտայ հրաշալի,
Զմեզ յաւէտ փրկեա՛, դու Տէ՛ր, 'ի վըտանգից մահահոտ,
Հրեղէն ամպովք առաջնորդեալ 'ի պողոտայն քո լուսոյդ։

ԱՐԱՄ. ՍԱՐԳԻՍ Կ. ԴԱՒԹԵԱՆ

1866 Աշ. Ա. Դասարանի

# ԱՐԵՒՄՈՒՏՔ

ՄԻՆՉ վարդամատն ճաճանչազեղ ըղձքնաղ դէմս իւր
ծածկէր,
Ցաւերժեան կոյս յեթերին ծիրանափայլ մտանէր,
Վեհ աշխարհին ըզմիգապատ թողոյր գիշերն տրտմագին
Եւ ինքն հանգչէր յԱտլանդական յալիս անհուն մեծ ծովին։
Հանգչէր զեփիւռն քաղցրահնչիկ 'ի ճօճալոյ 'ի տերևս,
Նուաղէր թռչնոց ձայնք երգեցոյն քաղցրանուագ ընդ այերս։



Գողցես աշխարհ կայր տխրադէմ և բնութեանն հրաշալիք,
Զի արեգին բոյք ոսկեգոյն չէին կարկառ յերկիր բնիկ։
Անդէն լուսինն եթերաճեմ 'ւ արծաթափայլ գերակայ
Մարդկան հանգիստ մեղմիկ շնորհէր, փայլէր կամարն Աս-
տեղեայ,
Ամպածըրար և սառնամած լերինք բարձունք փայլէին,
Զբնութեան գեղեցկութիւնս անդ 'ի հանդէս ածէին։
Շողիւնք վէտ վէտ գետոց ալեաց իբրև զարծաթ փայլէին,
Մանուածաւալ և առուակաց խոխոջք զմարդ հրճուէին։
Զեփիւռն անդէն ճեմէր ճօճէր 'ի գալարիս գեղգեղուն
Մեծ շառաչիւնք անդ տերևոց զանտառն հնչէին լայն 'ւ ան-
հուն։
Հոտ անուշից անդ լնուլի զոգցես 'ի Դրախտն Եդեմայ,
Երգ սոխակաց 'ւ ուրախութիւն 'ի վայրի անդ գերակայ։
Այսպէս ահա տեսեալ մարդկան զաշխարհըն վեհ մեր բնիկ,
Ցանկան դնալ առ Կենարարն, օրհնեն զանուն գեղեցիկ։
Կան 'ի զարմանս ընդ հրաշալիս օրհնեն զՓեսայն սուրբ ան-
մահ,
Յորժամ պօչէն օրհնեալ լիցի քո վեհդ անուն գերակայ,
Եւ հիմ ընդ այս մեք զարմանամք, Է այս աշխարհ դուզնաքեայ
Մինչդեռ երկնից մեզ խոստացեալ պըսակըք են գերակայ։
Ապա ուրեմն պարտ է մեզ կեալ առաքինի մինչ ց'վերջ
Ի վայելել զերջանկութիւնս որ պատրաստեալ կան յաւերժ։

1866 ԱՐԱՄ, ՍԱՐԳԻՍ Կ. ԴԱՒԹԵԱՆ

Աշ. Ա. Դասարանի

## Ի ՅԻՇԱՏԱԿ

## ՏԷՐ ՄԱՐԳԱՐ ՔԱՀԱՆԱՅԻ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՅ

Ո՛հ, սըգաւոր վէհն Այրարատ մերոտին,
Սո՛ւգ զգեցաւ սո՛ւգ անպայման հիգալին,
Զի՛ ողբերգուն Մելպոմենէ անանջատ
Տխրադիմակ բազմի նորին 'ի գագաթ ։
Հնչէ սրինգ տխրանուէր հնչէ գոյժ ,
Ձեռն 'ի ծնօտն մուսայն լինի քստմնափուշ ,
Զքնաղ յաչաց գետահետին արտասուք ,
Ճօճան 'ի հողմն և ոսկեթել վարսիցն հիւսք ։
Քանզի ահա զոռ Ծերունւոյն գերանդի
Կայծակնաբար իջոյց հարուած չեշտակի ,
Եւ տրտմութիւն տարապայման արկ 'ի մեզ
Բարձեալ 'ի մէնջ ըզՏէր Մարգար հայրըն հեզ ։
Որ Մեղեսեան տանս էր վեհ աստղ շողշողուն
Ճարտարախօս և վիպասան բանիբուն ։
Հայկեան զարմս նա սփոփանք երկնաձիր
Բարեհամբաւ հեզահամբոյր և ընտիր ։
Որ յազգին սէր զաշխատութիւնըս պէս պէս
Միշտ յանձն առնոյր մեծ վարժապետն քաջապէս ։
Հեղոյր ծղունս մարգարտահատ 'ի յայտից ,
Առաջնորդել մանկանց յուղին իմաստից ։
Բայց այժմ հանգչի 'ի պերճ կամարն Աստեղեայ
Ընդ հրեղինաց օրհնէ զԱստուածըն անմահ ։
Անմահ ուրեմն կացցէ նորին յիշատակ
Երախտապարտ 'ի մեր 'ի սիրտս 'ի քանդակ ։
Իսկ դու , ո՛վ Հայր , ոգիդ արդար , ժիր մըշակ ,
Որ 'ի հովտէս լալեաց ելեր վաղվաղակ ,



Ընկա՛լ ուրեմն զյաւէրժականն ըզպըսակ ,
Փոխան ճըգանցդ առ մեր հեզլոց յայս 'ի յարկ ։

ԱՐԱՄ , ՍԱՐԳԻՍ Կ. ԴՈՒԹԵԱՆ

1866 Աշ. Ա. դասարանի

## ԾՆՈՒՆԴ

## ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Հի՞մ արեգ գեղատես ջինջ յեթեր երեւի ,
Հի՛մ կամարն Աստեղեայ մեզ տարբեր տեսանի ։
Քանզի նոր մեզ Արքայ՝ ծընաւ Տէր մեզ այսօր ,
Նո՛ր ծընունդ հիասքանչ, նոր արփի որդի Հօր ։
Թառամեալ և ծաղկունք դարձեալ գոյն զգեցան
Եւ աղբերք ցամաքեալ յորդահոս հա բացան ,
Եւ աշխարհս համօրէն ցնծութեամբ գոգցես լի ,
Միշտ մայեն և ոչխարք զծընունդն հրաշալի ։
Թռչնոց և դայլայլիկ գոգցես մեզ աւետեն ,
Թէ ծընաւ Տէր Յիսուս յանարատ 'ի Կուսէն ,
Ցնծութիւն մեզ մարդկան ցնծութիւն անսահման
Զի ծընաւ աշխարհի նոր Արքայ աննման ։
Ի կամար կապուտակ Աստղ վեհ երեւի ,
Քան զաստեղս ամենայն լուսաւոր նա փայլի ,
Եւ գոգցես այն մըսուր ցնծութեամբ շողշողի ,
Աստ , գուշեն և հովիւք թէ , ծընաւ Հօր Որդի ։
Մոգըք գան 'ի մըսուր հեզութեամբ , տեսանել
Ընծայել խունկ զմուռս , զՓրկիչն համբուրել ։

ԱՐԱՄ , ՍԱՐԳԻՍ Կ. ԴՈՒԹԵԱՆ

1866 Աշ, Ա. դասարանի

# Ի ստուերն Վարդանայ

ԱՀԵՂՆ այսօր հանդիսանայ յատեանս Հայկեանն Հերակլէս,
Շանթ Դիւցի, ահ ոսոխաց, և հուր անշէջ հաւատոյ:
Հնչէ տաճարս, ո՞ է քաջն այն, վեհ Հերակլէսըն Հայկեան...
Վարդան արին Մամիկոնեան վեհ զօրավարըն Հայոց:
Որ 'ի սէր հաւատոյ, և բնագաւառըն հայրենեաց,
ԶԱւարայրեանըն վեհ դաշտ ներկեաց արեամբ վարդագոյն:
Ո՜հ, քանի՜ սուգ Այրարատայ դրոշմի այսօր 'ի ճակատ,
Ո՛վ մահ անագորուն, դժնեայ գաղան դու անգութ,
Որ 'ի մաղխս Ստիմբաղեան յափշտակես զամէն ոք,
Չէ՞ շատացեալ և 'ի փոքուն այլ և զընտիրն առնուս ճարակ,
Ո՜հ խորշակ անագորուն Եւրոպեան չար հպատակ,
Զպեղեցիկս 'ի ծաղկանց հիւսես պսակ գոռ գլխոյդ:
Սակայն յուշ, մի՛ դու պանծար, վասն դու արքայդ գոռ մահու
Ընդ զօրութիւն քոյ եղջերաց որով զքաջս անպարտելի,
Զհետ յաղթական քոյին կառաց ածես ընդ քարշ,
Սրնոտի են քո փառք, մահըդ կոխեալ 'ի մահուանէ:
Զի թէ ոսկերք Վարդանայ աճիւնացեալ լուծեն 'ի հող,
Սակայն հոգի երանելոյն անմահ յերկինս կայ յաւերժ:
Որ պսակաւ անթառամ պճնեալ չքնաղ 'ի տեսիլ
Ժառանգ երջանկութեան 'ի փառս երկնից վերճեմէ:
Իսկ դու, ո՛ երանելիդ, որ այժմ հանգչիս 'ի յեթերս,
Ընդ սրբելից օրհնես զԱստուած զպսակիչն քոյ ճգանց,
Ո՜հ, քանի՜ զովեստից արժանացար դու յերկրի,
Որ զարին քո հեղեալ ուղղեցեր զՀայաստան:
Եւ զերկինս գնեցեր ժառանգութիւն քեզ անվախճան:
Զօրապետ քաջ եղեալ հօտիդ ընդ գոռ գայլոց մարտեար,



Աստուածատունկ Դրախտին պայծառութեան սիւն երկնաքերձ,
Յաղթեցեր խորշակին, և փոխեցար առ Աստուած:
Ուստի յաւէտ անջինջ կացցէ քո պերճ անուան յիշատակ
Յերախտապարտ 'ի հոգիս, և յԱյրարատ ամրափակ:

1866 ԱՐԱՄ, ՍԱՐԳԻՍ Կ. ԴԱՒԹԵԱՆ
Աշ. Ա. Դասարանի

Ի ՓՈԽՈՒՄՆ

## Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ Ա.

### ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց

Ա՜հ ինչ արդեօք վեհն Այրարատ 'ի սուգ տըխուր թախծալը՛
Զի՞ արդեօք ծիրանափայլ իւրըն դրօշակ ոչ փայլի:
Ո՜հ, առ իմէ՞ արեգական ճառագայթից գեղ ճաճանչ
Ոչ է կարկառ ոչ բոցք նորա յաշխարհըն մեր գերապանծ:
Գոգցես լերինքն Այրարատայ բարձրագագաթ վեհ բլուրք
Կան սգազգեաց և ակնկոր Հայաստանեայց պերճ ծաղկունք:
Գոռն այն մանգաղ Կռոնոսեան քէնախնդիր թշնամի,
Նախանձեցաւ ընդ մեր ընդ փառս, կշռեաց հարուած շեշտակի,
Շիջոյց անդէն ըզՀայկական Ոսկեփայլըն ճրագ,
Այրի եկաց աթոռըն սուրբ Հայաստանեայց գերունակ:
Զի արդարոյ նմին ըզքուն Տէր Մատթէոս հայրապետ
Հայաստանեայց վեհ աշխարհին, Հայ որերոյն հովուապետ:
Եւ արդ հանգչի յեթերական 'ի յԱստեղեայ կամարին
Ընդ հրեղինաց օրհնէ զԱստուած ըզփեսայն իւր անձկալին,
Ազգասիրաց նա 'ի վեհ սիրտ անմահ եթող յիշատակ,
Արքայութեան եղեալ ժառանգ առ զանթառամն ըզպսակ:

ԱՐԱՄ. ՍԱՐԳԻՍ Կ. ԴԱՒԹԵԱՆ

1863 Աշ. Ա. Դասարանի

# ԱՐԵԳԱ̀Կ

Հըզօր արքայ
Արփիդ չըքնաղ գերակայ ։
Պալատդ ահա
Շըքեղ կամարն Աստեղեայ ։
Հըպատակ բիւր
Հայլք աստեղաց որ 'ի սփիւռ ։
Դու ջահ ըմբոն
Տիեզերաց 'ի կեդրոն ։
Լապտեր անշիջ
Բոցաւորեալ յեթեր ջինջ ։
Հըրաշագոյն
Ցանբաւութեանս 'ի ձեղուն ։
Ուր շողշողի
Քոյ դէմք չըքնաղ, ո՛վ Արփի ։
Քեւ մեր աշխարհ
Ի բաց պուղէ զիրս աշխար ։
Ի քէն խաւար
Տարամերժի անդադար ։
Քեւ բընութիւն
Գըձնի աշխարհս և անհուն ։
Ուստի օրհնեալ
Մաան որ շնորհեաց քեղ ղայդ փայլ ։

ԱՐԱՄ․ ՍԱՐԳԻՍ Կ․ ԴԱՒԹԵԱՆ

1866

Աշ․ Ա․ դասարանէ



# Ի ՉԱՐՉԱՐԱՆՍ ՏԵԱՌՆ

Ո՞Ր այն մեղաւոր տեսեալ զաստըւած ,
Որ կայ 'ի խաչին պերկ բազկատարած ,
Ոչ արտասուալից նա լըննու աչօք ,
Զի որ 'ի ծոց Հօր էր անճառ փառօք ,
Այսօր նախատի Հօր Բանն 'ի խաչին
Ցանձին ունելով զմեղս նախաստեղծին ։
Որոյ անսաստեալ Աստուծոյ բանին
Ցանմահութենէ անկաւ իւրովին ։
Այլ ոչ եթող Տէրըն զիւր արարած
Կալ յանհաշտութեան սպառազայս ամաց ,
Առաքեցաւ Բանն յաշխարհ 'ի վերուստ ,
Զի մի ձեռակերտքն անձին 'ի կորուստ․
Զի էր բարերար վայել բընութեան
Զիւրըն պահպանել անախտ 'ւ անսասան․
Արդ վասըն մարդկան կըրէ մարդկային
Ըզմեղանս՝ որ էր նոցին անդըստին․
Անարատ սուրբ Գառն և Նզըն պարարտ
Որ է Որդին Հօր՝ սպանաւ անպարտ ։
Պըկեալ 'ի փայտին 'ի կոր կայ գըլուխ ,
Ցայտ առնել մարդկան զիւր սէր հոգեբուղխ․
Արեամբ թաթաւի համակ իւր իրան ,
Անկնարկէ լինել զօրավիդ մարդկան․
Փոխան արքունի թագին ընկալաւ
Ըզպըսակ փշեայ որով մեղք լուծաւ․
Ընկալաւ եղէգն 'ի տեղ Հպարտին ,
Զի արկցէ ըզնա 'ի խոր խաւարին․
Թուք պիղծ բերանոյ հաս յերեսս նորին ,
Որով նախատինք Նախահօր սրբին․

Յեղակարծ ապտակ (որ ’ի ծնօտն հնչեաց,)
Ըզբելիարայ լոյծ ըզժանու հարուած,
Յարեան վըկայք սուտք ’ի պատճառ խաչին,
Զի ըմբերեսցէ ըզբերան Զաւին.
Եկաց անկոր ’ի դատաստանին,
Բառնալ ’ի մարդոյն զամօթն առաջին.
Փայտ մահառիթ յուսն եւ ’ի Գողգոթայ,
Ըզդառն պողոտայ սրբեաց զԱդամայ.
Ընդ որ ընթացաւ Նախաստեղծն խաբեալ
Կըթել ըզպըտուղ ծառոյն արգելեալ.
Յանձին առնելով ըզմուրհակ մահուն,
Այլ կանգնեաց Քրիստոս զբնութիւն մարդոյն.
Լեղի դառնութեան անօրէնք ետուն
Անբիծ անարատ նորին բերանոյն.
Զի ըզդառնութիւն մահաբեր պտղոյն
Փոխակերպեսցէ ’ի սուրբ քաղցրութիւն.
Հարուած գեղարդեան ’ի կողն ընկալաւ,
Որով նոր Ուխտին խորհուրդ հաստեցաւ.
Արիւն բղխեցաւ ’ի նորին կողէ,
Զանմեղ Ճաշակողս որդեգիր առնէ.
Ջուր յարարչական մարմնոյն ծորեցաւ,
Որ ’ի մաքրութիւն մեր կենաց տուաւ.
Ի սուրբ դպրութեան Հօր ըզմեզ գրեաց,
Եւ վասն մեր առ Հայր բարեխօս եկաց.
Ո՜հ, Աստուածային արծարծեալ սուրբ սէր
Հարկեաց իջանել զարարածոց Տէր.
Ըզչարչարելի ըզգենուլ մարմին
Ի խորասուզել զՕձըն ընջովին:
Եկայք երկեցէք առաջի խաչին,
Որով փրկութիւն ազգ մարդկան առին.



Ամբարձէք զաչս ձեր տեսէք ’ի փայտին,
Անշընչացեալ կայ Աստուծոյ Որդին.
Վառեսցին սիրտ ձեր ’ի սէր Կենսատուին,
Որ ’ի սէր մարդկան ըզգեցաւ մարմին.
Ծորեալ վիժեսցին ’ի մերոց աչաց,
Առուք աղբերց եւ վտակք արտասուաց.
Պատառեալ ըզսիրտ առաջի նորին
Սփռեսցուք աղերս միշտ արտասուագին.
Զի ’ի սիրտըս մեր արկցէ ըզսէր իւր,
Որ ’ի սիրտ սրբոց արդէն բորբոքիւր.
Զի հանդէպ նոցին վարուց արասցէ
Եւ ըզմեզ, լինել մեղաց ’ի բացէ:

1866 ՅԱԿՈԲ ՄԱՂԱՔԵԱՆ

Աշ. Ա. Դասարանէ

# ՎԱՍՆ ԽՂՃԻ ՄՏԱՑ

ԹԱԳԱՒՈՐՔ երկրի ’ի վերայ մարդկան դատաւորս կարգեն,
Ըզպահպանութիւն իւրեանց օրինաց առ ’ի մէնջ խնդրեն.
Ըզչարագործաց ըզգործս չարութեան բռնութեամբ կարճեն,
Եւ ըզյեղուզակս ’ի կախաղանի ’ի մահ արկանեն.
Սուսեր յիւրեանց մէջս ածելով շրջին առաջի մարդկան,
Յորմէ վնասագործք ’ի յահ եւ յերկիւղ սրտատրոփ մնան.
Ի թագաւորաց կարգեալ ոստիկանք նստին յատենին,
Դատել ըզմարդկան գործս արդարութեամբ ’ի խնդիր լինին.
Իսկ թէ քննեսցես՝ գըտանին զուցէ հոյլք դատաւորաց,

Որ զարդարութիւն 'ի դատաստանի թիւրեն զանմեղաց։
Այլ Թագաւորին երկնային կարգեալն ոստիկան չշեղի,
Երբէք յիրաւունս և չար դատաստան չառնէ անտեղի.
Այդ ոստիկան է խիղճ մըտաց, զոր Տէրն կարգեաց 'ի բընէ
Ի սիրտ մեր մարդկանս, որ ամենեցուն զուղիղն ազդ առնէ.
Ըզբարին և զչար իբր օրինակաւ տայ մեզ ճանաչել,
Ըզչարըն խոտան 'ի բաց ընկենուլ՝ ըզբարին ընտրել.
Ըզվարուց մերոց զանվայել ընթացս սաստիկ կշտամբէ,
Ըզմեր թերութիւնըս յայտ յանդիման առաջի դընէ.
Ցար և հանապազ ըզմեզ տագնապեալ բողոքէ ըզմէնջ,
Եթէ զանհաճոյ և ըզթիւր վարուց ունիմք մեք ըզտենչ.
Զի նորին տագնապ որ ըզմեզ կիզու մեծ ւ' անտես բոցով,
Քան զԹագաւորաց լիցէ չարագոյն, զոր ածեն սըրով.
Զորոյ փորձ գիտեմ, զոր համբուրեցի վասն իմ չար գործոց,
Իսպառ նեղութիւնք զինև պատեցան իբր ըզգըժոխոց.
Երանի՜ որում յայս ամենայնէ ազատ զանձն կացոյց,
Զի սուրբ հանգստեան առաջի աչաց կալաւ ապացոյց։
Օ՜ն և մեք եղբա՛րք, այժմէն մաքրեսցուք ըզխիղճ մտաց մեր,
Զի սուրբ Փեսային և առ մեզ հասցէ ձայն աւետաբեր.
Թէ «յիմմէ Հօրէ շնորհօք օրհնեա՛լք, դուք ժառանգեցէք
Զօթեվանս սրբոց, ւ' 'ի կաճառ նոցին աներբ ցնծացէք»։

ՅԱԿՈԲ ՄԱՂԱՔԵԱՆ

1866 Աշ. Ա. Դպրատանէ



Ի

## ՔՍԱՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ ՕՐ ՄԱՅԻՍԻ

Զիս եղկելիս տագնապ կալաւ տխրալի,
Մինչ խորհէի յարտասուաթորմ գիշերի
Ըզշուք նախկին փառաց ազգիս գեղեցիկ,
Որով ցնծայր աշխարհն յաւէտ երջանիկ.
Եւ ըզգածեալ 'ի նոյն 'ի վիշտ Հայրենի,
Հառաչանաց առ Սաբաւովթ ձայն բարձի.
Աճա՛ անդէն որմունք յարկիս փայլեցան,
Տեսարըն հրեշտակ ծիրանազգեաց հրաշակն
Իջ և ըզմեծ ինձ խնդութիւն ակնարկեաց,
Պարզեալ զաչկունս իմ 'ի գետոց արտասուաց.
Զքսան և չորսըն Մայիսի աւետեաց,
Սրբամաքուր մատամբն աջոյ գըծագրեաց
Ըզթիւ աւուրն՝ յորում մատեան կանոնաց
Պարգևեցաւ մեզ երկնաձիրն 'ի շնորհաց։
Աւետաբեր Թռեան Մուսայք յԱրարատ,
Դէմք զուարթունք երևեցան սարն յազատ։
Որ առաջի համայն ազգաց ակնկոր,
Այսօր եգիտ զօճան փառաց լուսաւոր.
Պարզեաց անդէն զանթառամոտն ըզճակատ,
Ծըպիտ 'ի դէմս իւր ծաղկեցոյց անարատ։
Աղէ՜ զարթի՛ք բերկրեալ որդի՛ք աւետեօք,
Զի ամրացաք կանոնական օրինօք,
Որով բուժէք կառավարեն անխոտոր,
Եւ ընդ որով հանդիսանան փառաւոր.
Եղբարց սիրոյ զօդ միութեան կցեսցի,
Ի նոյն լիջիք ամենուրեք սխրալի։

1866 ՅԱԿՈԲ ՄԱՂԱՔԵԱՆ

Աշ. Ա. Դպրատանէ

# Ի ՆՆՋԵԼՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

ՉԵՄ բաւական զիմ Սիրելւոյս մահ նուագել ըստ կարի
Որ վասըն իմ ՚ի Գողգոթայ լերին կատարըն խաչի.
Ալէտանջեալ ալէտք սրտիս զիս չարաչար վշտագնեն,
Մինչ տեսանեմ զորդւոյս Հաստիչ յոյժ վշտացեալ ՚ի ցաւէն.
Արարչագործ տարածեցաւ բազուկ նորա ՚ի փայտի,
Հօր Միածին՝ Նախաստեղծին զմահ ճաշակեաց դառնալի.
Քանի՛ ցաւոց ինձ եղկելոյս՝ առթեն պատճառ Տէրունւոյս
Բեւեռք ձեռաց, որ յանմատոյց սուրբ Սիոնի հանգչէր լոյս.
Այսօր կամաւ ՚ի սպանդ վարի յանօրինաց խուժանէն,
Որ արարան ՚ի վայրկենի յԱստուածային հրամանէն.
Ո՛հ, Սիրասուն Ամենակա՛լ, յո՞ր աղէկէզ ցաւ հասեր,
Յորում խոցիս ՚ի մըշակաց Իսրայէլեան կարեվէր.
Ի սիպ լերին դու ՚ի խաչին տարածեցար առ ՚ի չեղ,
Աղետալի ինձ տեսարան քոյոց դիմաց եղև դեղ.
Այդ քո բազուկ, որով խըլից արձակեցան լըսելիք,
Եւ տեսանել աչացըւոց զարարածս քո գեղեցիկ,
Համրոց կապանք լեզուի լուծան ՚ի յօրհնութիւն քոյ փառաց,
Արդ բեւեռի, և կըթոտին աճառք ջըղաց քոյ ծնգաց։
Նըւաղելոյս քոյին ձայնի եղէ կարօտ մեծապէս,
Որ որոտայր առիւծաբար ժողովրդեան ՚ի հանդէս.
Եւ աւետէր զերկնից փառաց արքայութիւն լու ՚ի լու,
Ես յա՞յդ վիճակ տեսից զքեզ հոգւոյս իմոյ կենսատու։
Աթոռ Մեծիդ երկինք, և երկիր ոտիցդ քո պատուանդան,
ԶԱնտանելիդ տանել յինքեան չեղէն երբէք բաւական.
Արդ ՚ի փայտի ոլորտացար իմ բընութեամբ եղկելի,
Քանէ՞ցս արդեօք տագնապեցար վասըն հիքոյս ցաւալի.
Օ՛հ թէ առնես քոյոց վշտաց յամենայն ժամ զիս կըցորդ,
Յորչափ իցեմ ես ՚ի մարմնի եղէց խնդիւ այնց հաղորդ.



Թո՛ղ ազգեսցեն յիս ՚ի հոգիս վէրք սուրբ մարմնոյդ հնգեքին
ԶԱստուածատենչ քոյին ըղձէր Հըրեղինացն տարփալին։

1866 ՅԱԿՈԲ ՄԱՂԱՔԵԱՆ

Աշ. Ա. Դասարանէ

---

# ՄՐՋԻՒՆ ԵՒ ԱՂԱՒՆԻ

ՄԽԻԹԱՐ ԳՕՇ

Ի ջուր խորին հեղձամղձուկ
Լինէր մըջիւն ՚ի տաղտուկ,
Կական բարձեալ աղաղակէ,
Ո՛հ, օգնութիւն ինձ հասցէ։
Ահա՛ անդէն սուրբ աղաւնին
Օգնեալ տայ ձեռն անզօրին։
Շընորհ նըմա կալաւ մըջիւն
Զ՚ եղև կենացն փրկութիւն։
Ընագ որոյն որսորդն ահա՛
Եհաս խնդիւ առ նոսա,
Միամըտին զընթացս դիտէ,
Արկանել զնա յարեւէ։
Մինչդեռ ուղղէր զիւր հըրացան
Գիտաց մըջիւն զմիտս նորայն.
Արագապէս առ նա եհաս,
Հատոյց նըմա պատուհաս.
Զի դառնագին կծեաց նորին
Զոտս, զոր ուռոյց անարին.

Ոստեաւ որսորդն 'ի տեղւոջէն ,
Գըտաւ պարտեալ յանարդէն.
Նափան արկաւ չար խորհրդոյն ,
Որ մահ սպառնայր աղաւնւոյն.
Որ ժամ գտեալ պատեհաբար
Ոտս արձակեալ թինդս էառ.
Զանկաւ մահու 'ի տուն անդութ ,
Որ էր նորին կենաց խութ ։
Թէ և տկարին սատար լինիս ,
Ցապայն տեսցես ըղձարիս։

ՅԱԿՈԲ ՄԱՂԱՔԵԱՆ

1866 Աշ. Ա. Դասարանէ

# ՀԱՌԱՋՔ

ԱՆՁԱՄԲ ցաւած
Գոչեմ յՃնսուած ,
Վասըն պարտուց
Իմոց բիւրուց.
Լըցայ մեղօք
Անինչ անօք.
Ամօթ որ յիս
Կոչէ յար զիս
Ի հուր կիզուտ
Յորում չիք զութ։



Ոսոխն մարդկան
Սատան դաժան.
Խնդրէ ձըգել
Ի բանդ անել.
Զանձն իմ անզօր
Վա՛յ ինձ այսօր։
Անկայ 'ի նոյն
Իսպառ համբուն.
Հարայ 'ի կոծ
Անբաժ 'ի քոց.
Փառաց անճառ
Չիք արդ պատճառ։
Իմոց մեղաց
Եւ յիմ կենաց
Անձամբ անձին
Սարտեայ ուժգին։
Տէ՛ր իմ անբաւ
Ոգիս հարաւ.
Վշտօք անտար ,
Գործիս տըկար
Մեղաց 'ի փուշ,
Անկայ անյուշ.
Ցոր միշտ տանջիմ
Ոգւով ճղճիմ։
Արդ Տէ՛ր անեղ
Զիս բազմամեղ
Արա՛ անմեղ
Զերդ ջինջ բիւրեղ։
Զմեղաց շղթայ
Տէ՛ր դու խզեա՛,

Գոչեմ առ քեզ
Սիրտ յաղէկէզ։

ՅԱԿՈԲ ՄԵՂԱՔԵԱՆ

1866 Աշ. Ա. Դասարանէ

---

# ՄԱՀ ԱՐԴԱՐՈՅՆ ԵՒ ՄԵՂԱՒՈՐԻ

ԱՐԴԱՐՆ անկեալ 'ի մահահուն մինչ 'ի մահիճ թշուառիկ
Կայր ապաստան յոգիս մազկունչ, և հրրեշտակ գեղեցիկ
Փարաւազէր զնա առ երի հէք սընարին այս գունակ.
«Չեզ մահացուացդ՝ ես յԱստուծոյ պատգամաբեր գերունակ.
Մի զանգիտեր ընդ հրաժեշտ քո 'ի հովտէս վաղանցիկ,
Ի յընտանեացըդ կաթոգին, և 'ի յարփւոյն գեղեցիկ,
Արեգականդ լուսաձաձանչ դու 'ի ցոլմանց արփենի,
Վայելէիր, գիտեմ, թէպէտ, այլ լո՛ւր ինձ յայսմ վայրկենի»։
Յաստեղաձեմն դու 'ի կամարն սաւառնաթեւ մինչ թռանիս
Անդ ցանգ ընդ մեզ կացցես յանդորր 'ի գահ շքեղ և բազմիս,
Այս ամենայն զոր տեսանես են ընդունայն իսկ բնաւ
Յաւուր միում տապաստ անկեալ կործանեսցին, հրամանաւ
Գեր Արարչին, որ յոչնչէ արար բընաւ զայսոսիկ
Եւ դու գիտես ո՛ ծերունիդ զայս ամենայն իսկ քաջիկ։
Ուրախացեալ ընդ այս բարբառ շուրջ արդարոյն անդստին
Տաւէր յոգին, ցանկայր թռչել 'ի յառագաստ երկնային։
Քանի՜ հեշտին և հոյակապ էր տեսարանն աննըման
Մինչ հրրեշտակըն հանդերձէր տանել զարդարն 'ի կայան։
Մինչ 'ի յարկին զբանիւք անկեալ ցանգ բարբառէր գեղեցիկ
Ահա՛ անդէն բակ ըզմահձաւ գժոխահեռ վայրենիք



Սեաւ 'ի դիմակ չար Սադայէլք գան 'ի գուպար ընդ հրեշտակ
Ի վայրն անբիծ, հազարաւորք և բիւրաւորք գումարտակ
Զերթ մանր ճճիս յուզմամբ մեծաւ յաղջամղջաւ 'ի լծին
Ուր ըզմիմեամբ 'ի կադ 'ի վէճ գնտատեսակ դատաղին.
Այնպէս բեհմովթք շուրջ զմահճաւ առաքինի ծերունւոյն
Կարմրալեզու և կորաձեւ պէս հասարակ զ'իշերոյն
Սպասէին մահու ծերոյն զի՛ քարշածեալ տանիցեն
Խաւարազարդ յեւրեանց կայան 'ի բորբոքեալ 'ի գեհեն։
Իսկ երկնառաք սպասաւորն ընդդիմամարտ կաց նոցին
Ի կոր սուսեր 'ի ձար վանեաց ըզխումբս նոցա աչագին.
Փախեան նոքա արագընթաց շիկնեալ 'ի դէմս շիկորակ
Մինչ վերստին կացին յայնվայր առէ արդարն ըզհրեշտակ։
«Բայց դու բանբեր ազէ պատմեա մինչ հոգի իմ 'ի մարմնոյս
Չէ բաժանեալ, թէ մեղաւորք են 'ի դժոխս են անյոյս»։
Անդէն պատգամ լուաւծըղին տայ զայս նմա անդրադարձ
«Մեղաւորաց պարք կան յաւէտ 'ի խոր տատամս և թախանձ.
Ո՛հ եղկելին ջամբ գազանաց լուսատեցից վայրագաց
Ուր համախումբ 'ի սեաւ դիմակ են տարմաբար սեւազգեաց,
Նոքա զերթ գայլ սովալլուկ բերանաբաց կան անդ յար
Թէ արդեօք ոք 'ի պատժելոց լինի նոցա կեր յարմար։
Հապա անդէն զաս մի վանեալ յԱստուածայինըն սաստէն
Պառակ պառակ դէմք կորակորք յուլուց թառաչս հատանեն.
Սարսուռն դողան, մինչ վայրագաց զահեղ դիմակն սեւաթոյր
Ականեն, ո՛հ, դալուկ սարսուռ բակ ըզնոքօք անհամբոյր.
Առնու պատի, յայնժամ մեծ կոծ և ջայլ սաստիկ արձակեն
Յողոքաւոր բան, ձիչ բառնան առ Հայրըն վեհ համօրէն»։
«Հայր անմահից և մահացուաց» նարկառ զաջ քո զօրաւոր
Մեզ 'ի բանդէս խաւարարգել հան և զերծո պաղատիմք.
Սակայն աչեղ Արարչապետն բազմեալ յաթոռ ոսկեկայ
Անտես առնէ զողոքաւոր զձիչ թառաչսն և ըզվայս։

Եւ բարկութեան 'ի կերպարան նա պըռըստէ զիւր գլոնն
Տայ դժոխոցըն բոցավառ տանջել զնոսա 'ի կոշկոճս։
Այսպէս ահա արդարք կեցցեն ջինջ յառաջաստ փեսային
Իսկ մեղաւորք յանել դժոխս չարչարիցին խմբովին»։
Ասաց, թափեաց զոգի նորին տարաւ կամարն յաստեղեայ
Ցաթոռ հանդչէր նա լուսեղէն, յերջանկութեան յանդ մնայ։

ԱՐՄԵՆԱԿ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԳԱՍՊԱՐԵԱՆ

1866 Աշ. Ա. Դասարանէ

# ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

ՄԱՐՄՆԵՂԷՆ տեսանեմք մեր աչօք անխափան
Հանգստոցս ընծայեալս առ մարդկան օթեւան։
Ի կորուստ մ'ր սեղանք, քանի՜ գանձք թանկագին...
Բայց անդ ո՛չ ծիրանիք, ո՛չ ոսկիք նշմարին։
Չիք անտի ելանել որոց անդըն մըտին
Հըրաւէր 'ի յերկնուստ չև հնչեալ ըզվերջին։
Ո՛րք ննջեն 'ի զով վայրս ընդ ախորժ հովանի
Սպասեն անդ անյայտ վախճանի աշխարհի։
Գտանին անդ բազում կափարիչք 'ի պատուար
Ի նոսա պարփակեալ դիակունք ա՛հ թշուառ։
Եւ նոցին ոսկերաց մնացորդք խղճալի
Տեսարան ահռելի յաչըս մեր նշմարի։
Ա՛հ, դուք արք, որք ննջէք 'ի դամբանսըդ լռիկ
Մեզ հրաւէր յար կարդայք 'ի բերան անխօսիկ։
Ապ' ուրեմն սիրելիք մի՛ երբէք մոռասցուք
Եթէ անդ ննջեսցուք յաւուր մի կենազուրիկ։

ԱՐՄԵՆԱԿ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԳԱՍՊԱՐԵԱՆ

1866 Աշ. Ա. Դասարանէ



## Ի ՅԻՇԱՏԱԿ

## Թ. ԱՆԴՐԷԱՅ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՅ

ՄՈՒՍԱՅՔ զողորկ հա՛ր 'ի փանդիռ դաշնակաւոր քո ըզլար,
Ապիկարիս լե՛ր զօրաւիգ խոնարհ երգել յայս կաճառ։
Հե՛մ տխրագին դասք ունկնդրաց ասա անմըռունչ կան գեղուն
Հե՛մ դասարանք մեր կան թափուր, և հէ՛մ տխուր այս ձեղուն։
Զի զԱնդրեայ հանգուցելոյ հօր մեր զքաղցր յիշատակ,
Համախմբեալ կամք 'ի տօնել աչք յարտասուս մեր համակ։
Այն որ 'ի ճիգն զոգի 'ի բուռն ցամաքաթեւ ծովաչու,
Ուղի յորդեաց, գանձել զիմաստս, լինել ազգին ձեռնտու։
Ուսաւ զիւր պերճ մայրիկ լեզուն և ախոյեան նա պանծայր.
Ապա վաղվաղ նա թեքեցաւ յիտալական 'ի բարբառ։
Եւ ըղձանայր համակ յոգին գրկել զվեհս Զմիւռնիա
Եւ մքենայք ընդ լոյծ ընդ ջուր ածին արագասոտ ըղձն։
Գրկեաց անդէն բաղկատարած տունն Հոմերեան զԱնդրէաս.
Ըղպերճիմաստն և հոյակապ զվարժապետն մեծհադաս։
Ա՛սող շողշող մեզ ծագեցաւ 'ի վարժարանս գեղապանծ,
Հարաւ ընդ անձն պայծառ գործել ըզճիգն ըզմիտըս մանկանց։
Սակայն մեք զուրկ գոլով նորին քաղցրաճաշակ 'ի ճըղանց.
Այժմ երանիկ դառեմք զորս են 'ի նմանէ սոնդիւց։
Զի՜ մեք աւա՜ղ ժամանեցաք ոչինչ նորին դար յոսկի
Զի՜ մեր չըթունք ճաշակեցին ոչինչ զճաշն փարելի։
Սակայն հոգին թէպէտ թռեաւ յերկնից կամարն շափիւղայ.
Ո՛չ հայրագուրկ եթող զմեզ զերթ անաէրունչ ըղծառայ։
Յորդւոց նորին յարեան և մեզ հարք վարժապետք բարեջան
Ջամբել մեզ ջամբ հոգեկեցոյց սիրայորդոր գիտութեան։
Ապա քանի՜ մեզ շնորհապարտ մնայ ձօնել փոխարէն.
Քանի՜ գեղուն սրտիւ օրհնել զանուն Անդրեայ հօր ատէն։

Նմա յերկինս տացին յոյժ վարձք առաւել քան ըղձայլակ
Տեղատարափ յորդ անձրեւաց, և քան զերկնից ըղփայլակ։
Ուստի ո՛վ հա՛յր, մեր փարելի ընդ զուարթնոց որ խայտաս,
Յերկնից կամարըն շափիւղայ, օրհնեա՛ սանուցդ քո ըղդաս ։
Մաղթեա՛ առ Հա՛յրըն երկնաւոր մեզ պարգևել յորդառատ.
Լոյս ճշմարիտ, գանձ թանկագին իմաստութեան անարատ.
Որով անշեղ Որդիքս Հայկայ 'ի լոյս հասեալ պերճ ուսման,
Մեր Հայրենեաց զաւակայծ կանթեղն ածցուք 'ի շող յաւիտեան։

1863 ԱՐՄԵՆԱԿ, ՆԻԿՈՂԱՅՈՍ ԳԱՍՊԱՐԵԱՆՑ
Աշ. Ա. Դասարանի



## Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ

## ԱՌԱՔԻՆԱԶԱՐԴ ԳԷՈՐԳ ԱՂԱՅԻ ՎԷՄԵԱՆ

ԶՄԻՒՌՆԱՑԻՈՅ

Զարթի՛ր նուագ ողբել ըղձուգ մեր 'ի կոյժ,
Զաչքասիրաց կոծել ըղձիւրոր անբոյժ ։



Գասնեա՛ց մի՛ այլ ձայն մեզ հնչէր հեշտալուր,
Լալեաց եհաս սուգ և հանդէս քեզ տըխուր։
Ո՛վ, զի՞ է մահ, հի՞մ 'ի բարին քո չի՞ք գութ,
Զի՞արդ անբոյժ թօթափին վէրք 'ի սըրոյդ։
Ո՛հ. քանի՞ դառն է քո ճաշակ, և քանի՞,
Մի 'ի զոհիցդ Վէմեան ողբոց արժանի։
Ա՛խ... 'ի յափանց որ դէմ առ դէմ ընդ Հերմուս,
Հնչեաց շըռինդն ոգեթախիծ 'ի մեր կոյս։
Մեռա՛ւ Վէմեան, հէք աղքատաց մեռա՛ւ հայր.
Ո՛հ. 'ի սրտի տանիմ զայս ձայն իբրև սայր։
Զաչկունսն հրացայտ գիշերադէմ մահն խփեաց,
Թուեա՜ յերկինս կեղերջք իւրոյն սիրելեաց։
Որք զաւակունքն գժբաղդ 'ի տիս դեռ ծաղիկ,
Լացըս հարեալ վազեն յիւրեանց մօրն 'ի գիրկ։
Ա՛հ, տեսարա՛ն քստմնասաղսուռ, ասեն, «Մա՛յր,
Զի՞նչ է այսո՛հ...մեռա՞ւ...աւա՜ղ...ո՞ւր մեր հայր...»։
Առ որս մեղմիկըն կերպարան յաւելու,
Կողկողելով՝ յաւերակին որպէս բու։
Կոր՝ յաղխիցն զերթ թառամեալ մանուշակ,
Բայց յարտասուս յաւելեալ գեղն անուշակ։
«Զի՞նչ այս... Երկի՜ն, ուստի՞ եղև ա՛հ... այս ինձ,]
Յո՞վ դիմեցից... ո՞ւր ըղձիմնդ իմ գըտից։
Ո՛վ, ո՞ւր ես դու իմ ամուսին սիրական,
Ա՛հ... դու լռե՞ս հո՞ղն ինձ տայցէ պատասխան,
Հողն՝ որ գգուէ ըզքո հասակ Տիտանեան,
Հողն՝ որ քանի՜ օն յոյսս բարեաց յումպէտ հան։
Վա՜շ եղկելույս, հի՞մ ես տեսից դեռ զարփի,
Յետ անջատմանդ անդարձ յինէն, 'ի յերկրի։
Ո՛, տայր ինձ զայն մահ չնաշխարհիկ լինել 'նդ քեզ.
Ո՛վ, դու միայն Երկի՜ն գըթա, մեռայց... ես»։

Քաղաքնեկի իբրու տեսեալ ամանորք,
Մըշակ բարեաց լինէր 'ստ անուանըն Գէորգ.
Արկանելով զանձն 'ի Ճըգունս յԱզգին սէր,
Եւ ըզկարօտ զօգըս լցեալ 'ի նուէր։
Նա ըզհաւատս ամենայնիւ իւր պահեաց,
Եւ ըզպըսակն Երկնից յաւէտ ժառանգեաց.
Իսկ 'ի շիրիմ Զմիւռնիոյ յաւէժ սուգ,
Ընդ իմ քընար Երկին ածցէ արտասուք։

1865 ՍՄԲԱՏ, ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Աշ. Ա. Տատարանէ



Ի ՓՈԽՈՒՄՆ

## Տ. ԿԱՐԱՊԵՏԻ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱՅՈՑ

Ո՞Վ վճիռ անքնին Աստուածային խորհրդոյ,
Որ ընդ պտղոյն գիտութեան վիճակեցաւ մարդկութեանս,
Երկի՛նք, հէ՞մ խոփ մահուն հարկանէ զմարդն 'ի տիս ծաղիկ..
Զի՞նչ ասեմ... տիեզերք յահ երկրպագեն վեհ պատգամացդ։



Ա՛հ... այսօր նոյն վըճիռ յափշտակեաց առ 'ի մէնջ
Ըզմեծիմաստ վարդապետն ըզկարապետ Շահնազարեան։
Թո՛ղք երկրի ո՛չ բաւեն ողբալ ըզմահըն տարաժամ,
Ցարտասուս Հայկական փոխարկիցին թէպէտ և։
Հո՛ղք դամբանին ներիրականք սրբեալք յօրհնիցըն որ 'ի ձեզ,
Թըրալեան վէհ բըլո՛ւրք, փոխք քանի՛ փառս ամփոփէք,
Քանի՛ և յօղս պարտիք բուրել 'ի սուրբ մարմնոյն առեալ
հիւթից,
Զօր այժմ կրէք 'ի ձեր ծոցի, հա՛ գետս լալեաց դնդնչեցէք։
Որ Թորգոմայ Տաճարին լոյս յաւելուլ ըստ իւրում սանն
Ցասպարէզ էջ ըլնուորեալ Բանին կենաց 'ի սուսեր.
Ի Հաւատ, 'ի Յոյս, 'ի Սէր, և յԵրկնայինն Իմաստութիւն,
Սպառազէն՝ մարտեաւ ընդ դէմ հոգւոյ և մտաց ոսոխին.
Մինչ Քարտէսք և սուրբ Մատեանք յանկիւնս 'ի խորշս աւե-
րակաց,
Լուծանիլ 'ի ջուր 'ի հող դատապարտեալ, մընային
Լուսոյն անմահութեան, և կամ մատանց հողխազործ,
Ցարեաւ Շահնազար Աստուածատուր լի շընորհօք,
Եւ զգիակունս Հայկեան տաուից զանձեալ 'ի ծոցն և 'ի գըլուխ,
Տարաւ յԵւրոպ Գիտութեանց առ արեգակն, և 'ի հուր
Անմահութեան՝ հոգիացոյց նոր Հայկականն Պրոմեթէոս։
Ընդ ատեղըք Շէյքսփիրայ կանդեաց զաթոռ Լուսաւորչին։
Որ 'ի սէր իւրոյ Ազգին և տառապեալ Հայրենեացն,
Անձնանուէր հանդիսանայր դառըն Ճըգանցն 'ի սուրբ բովս։
Իմաստս հանճարաւորս կենցաղօգուտս տանն Հայկայ
Դըրոշմեալ յիւրն Երկրագործ 'ի սփիւռս Հայոց ծաւալէր։
Հայրենեաց երջանկութեան և բարեբաստ ապագայից,
Նախագիծք հեռատեսեալք կամ իբրու տառք կանոնականք
Ի հանճարոյն մինչ ծնանէին 'ի փրկութիւն Հայաստանեայց,
Նախանձեցաւ մահ դժնդակ լարեաց փքին օրհասաբեր,

Ո՛չ 'ի գաւիթն այլ 'ի հովիւն, յանձնանուէրն, 'ի վէհն Հայր,
Եւ տապալեաց զսիւնն ահեղ, զոր անսփոփ ողբամքս ահա.
Ելցէն ուրեմն Մուսայք Հայոց, ողբերգ երգոցն Աստուածանուէր,
Եւ ծխեսցեն բուրվառս նորին կնդրուկս համաբուրեան.
Կանգնեսցեն նմա անդրի ոսկեգանդակ 'ի պատուանդան,
«Աստ է հէթ Շահնազարեան հանդեաւ 'ի ծոցանց լեր վասն
Ազգին»։

1865

ՅՄԲԱՑ, ԿԱՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Աշ. Ա. Դասարանի



# ՀԱՄԱՌՕՏ ՔՆՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅՈՑ ԳՐԱԲԱՌ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԲԱՌ

## ԼԵԶՈՒԻՆ ՎՐԱՅ

Ընթերցեալ 'ի Ս. Մխր. վարժարանին յաւուր տօնի Ս. Վարդանանց
3 փետր. 1866 :

ԱՅՍ նուիրական օրս կը հրաւիրէ մեր միտքերը յա-
ջնելս ուղղել, ուր ամբողջ Հայկազն ազնուական Նախարար-
ներ, և Հայոց աւագանին միահամուռ անհաւատ Թագաւորի
մը առջև մահու կամ կենաց ուխտը կընեն։ Բարբարոսը մո-
խիր կամ սուր կ'սպառնայ, իսկ քաջասիրտ երանելիներն՝
Քրիստոսի և ազգին սիրովը բորբոքած իրենց պարանոցները
կը կարկառեն ու ձեռքերնին Երկինք վերցընելով, Աստուած,
կ'աղաղակեն։ Ո՛հ ինչ կը լսուի, պատերազմական շեփորներ
կը հնչուին, վահանները իրար կը խեթկեն, Աւարայրի Տղղ-
մուտ գետին երկու կողմերը քաջք քաջաց հետ կը զարնուին,
հզօրք հզօրաց հետ կը մարտնչին։ Բայց ո՞վ է այն գեղերա-
ցէմ մարդը... Ո՛հ Վասակ ուրացելոց գլուխ եղած իրեն-
ներովը Պարսից կողմը կ'անցնի և Քրիստոսի կենարար խաչին
դէմ կը պատերազմի։ Գարնանային եղանակը և գետին կար-
կաջահոս ջուրերը, Վարդանայ և սուրբ ընկերացը վարդա-
կարմիր արեան գոյնը կ'զգենուն։ Այն սարսափելի մահահոտ
հրապարակին մէջը կ'իյնայ Վարդան և Եկեղեցւոյ դրօշակը վեր
կը բարձրանայ։ Վարդանայ արեամբը ոռոգուած հողէն ի-
րեն նման սուրբ Հաւատոյ պաշտպանութեան համար ախոյեան-
ներ կը յառնեն հետզհետէ։ Երկու կողմն ալ կը յաղթեն

մէկը յերկինս և միւսը յերկրի։ Վարդանայ Ճակատը Երկնային անթառամ պսակ կ՚ընդունի, իսկ Վասակ Երկրային Թագաւորին անոտի և աշխարհային փառքեր և իշխանութիւններ կ՚ընդունի։ Վարդան և Վասակ մէկտեղ կը փառաւորին, Վարդան յերկինս, Վասակ յերկրի, և որովհետև Սողոմոնի ըսածին համեմատ «Ինչ որ արեգական ներքև է՝ ունայնութիւն է, իսկ ինչ որ արեգակէն վեր՝ յաւերժական է», Վարդանայ ստացած փառքը արեգակէն վեր ըլլալով յաւերժական կը մնայ, իսկ Վասակայ արեգական ներքեւ վաստըկած ունայն փառքերն տեսէ՛ք ինչ վախճան ունեցան։ Պարսից Թագաւորը Արեաց դրան յիշատակները քննելով Վասակայ ոճրագործութիւնքը երեւան ելան, ատեան կանչուեցաւ նա, ուր դատապարտուելով պատուական և թանկագին զգեստները և Թագաւորական նշանները շուտով առնուեցան իրմէ, և փոխանակ այնոցիկ՝ մահապարտի զգեստներ հագնելով խաւարչուտ բանդի մատնուեցաւ, հոն չարաչունչ մարմինը որդնոտեցաւ և ամեն պիղծ անդամները սորեցան, լեզուն միայն կենդանի էր, բայց անապաշաւ։ Ի վերջոյ Թշուառութեան անլուր օրինակ ներկայանալով աշխարհիս երեսէն կորսուեցաւ գնաց. ուր որ արժան էր երթալ։ Սակայն երանելին Վարդան Երկնից յաւերժական փառաց մէջ լուսափայլ պսակով զարդարուած կը վերճեմէ, անոր փառքն անանց են, անիկա 'ի բարձանց անտի իւր աչաց ահեղ ակնարկութիւնը դէպ 'ի յերկիր Աւարայրեան սուրբ դաշտերուն վրայ կը յառէ։ Եւ զինչ ահա այն սրբասահման վայրերէն Վարդանանց վարդակարմիր արիւնը ահեղ և քստմնասարսուռ ձայն մը կը հնչէ մեր լսելեաց, ձայն որ ճշմարիտ Հայու սրտին մէջ նորէն կարեվէր ցաւ մը կաւելցէ, բայց զգաստացնող և բուժիչ ցաւ։

«Ես, կըսէ, ո՛վ սիրելիդ իմ Այրարատ, ո՛վ մայր



իմ ցանկալի, իմ որդիական պարտաւորութիւնս կատարեցի, քու չնաշխարհիկ փառքերդ հրաշապէս պայծառացուցի, քու Հայաստան սիրուն անունդ աշխարհի վրայ եզական և պարծանք կացուցի, վերջապէս քու ահեղ պադաթունքդ իմ մարտիրոսական և վարդակարմիր արիւնովս պսակեցի, այն արիւնը՝ որ բիւրաբեղուն և քնքուշ արգանդիդ հիւթերէն մզելով ինծի շնորհեցիր, փոխ էր անիկա և ահա այսօր վերստին քեզ դարձուցի զայն սիրալիր ծոցդ ողողանելով, բայց և քու պաղպաջուն պադաթունքդ մշտաբարբառ վկայներ թող հանդիսանան իմ արեանս հեղման վասն Հաւատոյ, և վասն Հայրենեաց։

Այն արեան քաղցրաբոյր կոլմունքներէն դարձեալ Երկնից Արարչագործ Մատը իմ և իմ եղբարցս նման հրաշալէքաջեր նոր նոր Դիւցազուններ պիտի յարուցանէ անշուշտ, քու դերաշխարհիկ փառքերդ մեծապայծառ լուսաւորելու համար։ Բայց ո՛հ սեաւ բա՛խտ, եթէ այն քաջափայլ նահատակաց հետ որոմի նման անագորուն և վատ Վասակներ ալ ծընանին և յերեւան գան, այն ժամանակ, ո՛հ տեսարան սարսափելի, ինչ կը ներկայանայ աչքիս առջև, այն ատեն կըսեմ քու փառացդ վեհ Ղամբարը իսպառ կը շիջանի, և դուն, ո՛վ Այրարատ, որ երբեմն կործանեցար և նորէն փառաւորապէս կանգնեցար, այն ժամանակ կործանումդ անյարիր կըլլայ, ո՛հ աչքիս առջևը կը ներկայանայ այն աղետալի վիճակը, ո՛հ կարծես թէ կը տեսնեմ սիրելի որդիքդ՝ անօրէն և անագորուն գազանաց մագիլներուն մէջ հեղձամղձուկ եղած, ահա աչքիս առջևը կը տեսնեմ, քու մայրական արտասուաց վտակներդ աղբերապէս կետահատած սիրասուն զաւակացդ կորստեան վրայ, ո՛հ յայտ յանդիման կը տեսնեմ և կարեվէր ցաւ կ՚զգամ այսօր Հայկայ հարազատ և անմիջական արիւնը կրող Հայկազունք, ծերք և տղայք, արք և կանայք,

հարսունք և փեսայք, Երկինք, և Հայրենիք, կանչելով յիղինները երկանց անտանելի ցաւին մէջ, հիւանդները մահուան դուռը հասած, և անպարտուն բնութիւնը իր ամէն բռնութեամբը զանոնք ճնշելով, կը քշուին քու մայրական ծոցէդ, և արտասուելով և հառաչելով, կը շարունակեն իրենց անտանելի և փշալից ճամբան, կ'երթան և Արեւմտեան բարբարոսներուն հիւպալէ գերիներ կըլլան որոնց մենք այսօր յաղթական եմք։ Ա՛հ Գանգէսի ափունքներէն Հայու հառաչանքներ կը լսեմ, Ատլանդական փրփրադէզ ալեաց մէջէն, «Մայր իմ մայր իմ Հայաստան», կը կանչեն, Կովկասու ստորոտէն Հայու աչաց զետերը կը նշմարեմ։

Ասոնք անշուշտ մեծ ցաւ են ինծի բայց աւելի մեծ և աղետանջ ցաւ այն է, որ ատոնք կը բաժնուին քեզմէ յաւիտենապէս. կ'երթան մեյմալ չդառնալու նկատմամբ, կ'երթան ընկղմելու բարբարոս ազգաց անել ովկիանոսին մէջ, կ'ուրանան Հայութիւնը և բոլորովին կ'օտարանան թէ Հայրենի սուրբ կրօնքէ, և թէ Աստուածախօս մեր լեզուէն, և թէ ոսկեհրաշ Հայկաբանութենէն, և ամէն Հայաստանեայց սովորութենէն, բայց գիտնան որ Երկինք պիտի զայրանայ անոնց վրայ, և բարկութեան շանթեր, կայծակներ պիտի իջնեն շեշտակի անոնց գլխուն վրայ, և իմ արիւնս Դատաստանին օրը ամենայն զօրութեամբ բողոք պիտի բառնայ անոնց օտարամոլութեան դէմ, և անաչառ հաշիւ պիտի պահանջէ այն ամենէն, որոնք Ազգութեան, Հաւատոյ, և Հայրենեաց դէմ իբր թշնամի, կամ իբր օտար անհաւատարմութիւն ըրին, մինչդեռ մենք արեամբ չափ ճգնեցանք, իսկ անոնք Հայ անունը, և Հայ լեզուն անգամ գործածելու ամօթ կը համարին իրենց պանդխտութեան մէջ։

Ուրեմն, Եղբարք, ինչ պէտք է մեզի ընել որ Վարդանայ ծանր բողոքը չհարուածէ մեր մտաց խիղճը, ինչ միջոցներ պէտք է 'ի գործ դնել որ Հայութեան հաւատարիմ ըլլանք և Հայաստանի որդի ըլլալնիս արդեամբք 'ի յայտ գայ։ Մեզի համար զէնք պէտք չէ, այլ մեր 'ի սփիւռս աշխարհի վայրավատին ազգը 'ի մի զօդ կապելոյ համար քաջազուն նախնեաց սուրբ աւանդները նախանձաբար պահել և պաշտպանել, այն աւանդները կ'ըսեմ, որոնք միայն կարող են հաստատուն և պինդ պահել մեր ազգութիւնը։



Ի՞նչ են ուրեմն ազգի մը ազգային Ոգւոյն նշանաբանները, եթէ ոչ՝ այս երեքը այսինքն Ազգային կրօնք, Ազգային գիր, և Ազգային լեզուն։ Վասն զի ինչով կը յայտնուի անհատի մը ո՞ր ազգէ ըլլալը, եթէ ոչ այս երեք նշանակներով, իբր թէ երբ օտարական մը կը ներկայի մեզ, անոր ինչ ազգէ ըլլալը իմանալու համար կը դիտենք թէ ինչ լեզուաւ կը խօսի, ինչ գիր կը գործածէ, և ինչ կրօնք կը պաշտէ, օրինակի համար երբ օտարական մը տեսնենք որ Անգլերէն կը խօսի կարծիք կ'ունենանք թէ Անգլիկ ըլլայ անիկա, երբ կը նշմարեմք թէ Անգլերէն կը կարդայ ու կը գրէ, մեր կարծիքը աւելի հաստատութիւն մը կ'ընդունի, և երբ կը տեսնենք թէ Պրահմական կրօնից դաւանութիւնը համոզմամբ սրտի կը խոստովանի, տարակոյս չենք ունենար ըսելու թէ անիկա ուրիշ ազգէ չէ այլ Անգլիկ։ Վասն զի ազգ մը ուրիշ ազգերէ որոշողն այս երեքն են այսինքն Կրօնքը, Գիրը, և Լեզուն։ Ուրեմն մեր ազգին համար ալ խօսելով եզրակացընենք թէ Հայ մը եթէ զուրկ է իւր կրօնքէն, իւր գիրէն, և իւր լեզուէն Հայ ըսելու տեղ չ'ունի անիկա։

Արդ Հայութեան հաւատարիմ մնալու համար հարկ 'ի վերայ կայ մեր նախնեաց այս երեք սուրբ աւանդութիւններն պինդ պահել։ Եւ որովհետեւ սոյն երեք Ազգային նշանակներուն վրայ խօսիլը մեր կարողութենէն վեր է, վասնորոյ գո-

հանանք առ այժմ Կրօնից և Գրականութեան խնդիրը թողլով, միայն Ազգային լեզուին վրայ խօսելու ըստ կարի մերում ։

Աշխարհիս վրայ ամեն ազգ իրեն սեպհական լեզու մի ունի 'ի նախնեաց իւրոց ժառանգեալ։ Արդ մեր ազգն ալ, որուն սկիզբը կարի յոյժ վաղնջական է, անշուշտ ունեցած է իւր նախնական սեպհական լեզուն ։ Մեր խնդիրը պիտի ըլլայ քննել թէ ո՞րն է արդեօք Հայոց բուն լեզուն։ Այս օրուան օրս կը տեսնենք որ երկու կերպ կը գործածուի Հայերուն մէջ այն է Գրաբառն ու Աշխարհաբառը։ Գրաբառը Եկեղեցիներու և մեծահռչակ Դպրոցներու մէջ կը տիրէ, իսկ Աշխարհաբառը հասարակաց բերնին մէջ հազար ու մէկ կերպարանքի ներքև ։ Ա՛րդ այս երկուքէն ո՞րն է արդեօք մեր Ազգային բուն լեզուն։ Քանի որ Ազգին սկզբնաւորութեան օրէն մինչև Ռուբինեանց դարը կը տեսնենք որ ամեն Հայ իւր մտաց ծընունդը Գրաբառ լեզուաւ աւանդերէ յետագայից, ասկէ դիւրաւ կիմացուի թէ մեր նախնիք այժմու աշխարհիկ բարբառը ո՛չ գործածած են և ո՛չ ալ ճանչցած երբէք, այլ Գրաբառն է եղած անոնց սովորական միակ լեզուն, իսկ աշխարհաբառին գոյութիւնը Ռուբինեանց դարէն կ'սկսի ըսելը անպատշաճ չի թուիր մեզ, վասնզի երբ Հայերը իրենց Երկրէն տարագիր եղան, և աշխարհիս բոլորտիքը ցրուեցան իրենց Հայրենի լեզուն ալ կերպարանափոխ եղաւ, այսինքն ո՛ր գաւառ և ո՛ր Տէրութեան ներքև որ ապաստանեցան, նոյն գաւառին և նոյն Տէրութեան լեզուին նմանելով կամաց կամաց ոմանք իրենց լեզունին բոլորովին կորսնցուցին, և ոմանց լեզուն նախնեաց լեզուէն բոլորովին տարբեր կերպարանք մի առաւ, և ահա՛ այս կերպարանափոխ լեզուներն, այս այլայլած բարբառներն են որ այս օրուան օրս ցրուեալ Հայերը կը գործածեն աշխարհաբառ լեզու անունով, այնպէս որ մէկ գաւառի մը Հայերը ուրիշ գաւառի Հայոց լեզուին անտեղեակ են կամ բոլորովին կամ ըստ մասին ։



Արդ քանի որ աշխարհաբառը տարբեր տարբեր գաւառներու և ժամանակներու լեզուաց խառնուրդ մի է, ըսել է որ անիկա յատկական լեզու մի չ'է կրցած ըլլալ, վասն որոյ փոխանակ Հայոց Ազգին լեզուն անուանելու զանի, լաւ ևս է, կարծեմք, ըսել թէ Աշխարհաբառը իրարմէ հեռաբնակ Հայերուն օտարներէ ընդունած հազար ու մէկ կերպ բառերուն և ոճերուն գործածութիւնն է ; որ է օտար և խորթ կերպ մի Հայաստանեայց համար ։ Ուրեմն կը մնայ ըսել թէ Հայոց բուն Ազգային հարազատ լեզուն Գրաբառն է միայն, որուն անփոփոխ մնալուն շնորհիւը Ազգերնիս ալ թէպէտ և ցրուած համայն և այնպէս մինչև ցայժմ Հայ անունը անջինջ պահած է իւր վրայ ։ Բայց քանի՛ օն ծանր է ազգասէր սրտերու, և ո՞րչափ ցաւ և տրտմութիւն կը պատճառէ մեզ, երբ մեր այս Ազգային բուն լեզուին աւելի ծաւալում և զօրութիւն տալու տեղ, ոմանք տհաս խորհրդով կամենան զանի մէկդի թողուլ, անոր կարևորութիւնը առ ոչինչ համարել, և վերջապէս կերպիւ իւիք զանի Հայ մանկանց ժամանակին կողոպտիչը անուանելով մինչև անգամ Ազգային Վարժարաններուն մէջ անոր ուսումը հարկեցուցիչ պէտք չ'է ըլլալ ըսելով յանդգնին անոր տեղ իրարու անիմանալի աշխարհաբառը հաստատել և հիմնել իբրև միակ զօդ Հայ ազգութեան որով ոչ միայն չարաչար կը սխալին, այլ և յանդէտս ամենամեծ վնաս տուած կ'ըլլան Ազգային միութեան ոգւոյն ։ Քանզի քանի որ հեռաբնակ Հայերն իրարու աշխարհիկ լեզուն չեն հասկնար, յարկաւ իրարու հետ ալ յարաբերութիւննին հետզհետէ կը դադրի, եթէ Գրաբառը չգործածեն իրենց մէջ իբրև միակ գործիք իրարու հասկնալու և հասկցնելու ։ Բայց աղէ աշխարհաբառին ջատագովները թող ներեն մեզ, կ'աղաչեմք, յատեան կանչել զիրենք, և հարցունել թէ ինչ զօրաւոր փաստեր ունին արբենք,

դեօք Բաբելոնական աշխարհաբառին հարկաւորութիւնը հաստատելու համար, ինչ բարենպատակ վախճան մը կ'րեակայեն, զոր ըստ կարծեաց իւրեանց խեղճ աշխարհաբառը պիտի կարողանայ շնորհել վայրավատին ազգերնուս։ Աղէ՛ թող խօսին համարձակ, Ազգին օգտին նուիրական է գրաւորական ասպարէզը, թող անվեհեր գան իջնեն այս ասպարիզին մէջ, խօսին իրենց փաստերը և պատասխան առնուն։

«Որովհետև, կ'ըսեն, Հայ Ազգը իւր նախնական շքեղութենէն ինկած, ներկայ ցրուեալ վիճակին մէջ խեղճ ազգ մը կը նշմարուի, մեք եթէ ճշմարիտ Հայ եմք անհրաժեշտ պարտք է՝ Ազգիս սոյն թշուառ վիճակին այժմէն առաջքն առնուլ։ Ա՛րդ ազգ մը ի՞նչով կրնայ յառաջանալ անշուշտ կրթութեամբ և ուսումնականութեամբ, ուսումնականութիւնը ինչո՞վ կը ծագի, անշուշտ գործածական լեզուաւ մը, և որովհետև Գրաբառը գիրքերու մէջ աւանդուած լոկ մեռեալ տառեր են, մինչդեռ Աշխարհաբառը արդի գործածական և ընդհանրացեալ լեզուն է, վասն որոյ 'ի դիւրութիւն ուսանողաց հարկ է Աշխարհաբառ լեզուն ծաւալել, և Գրաբառը մէկդի թողուլ»։ Պատասխան։ Ի սկզբան դուցէ ազդու երեւայ լսողաց այս փաստը, բայց երբ մանր քննութեան մտնենք, դիւրաւ կ'իմացուի թէ ո՞րչափ անզօր, տկար, և փտուն է։ Արի՛ ուրեմն ե՛կ, ո՛վ ջատագովդ Աշխարհաբառի. եկ և ձեռք ձեռքի տուած մտնենք մեր Հայրենիքը, տե՛ս ահա՛ մեր Հայրենիքը երեքի բաժնուած, Տաճկաստանի Հայաստանին մէջ գործածուած Աշխարհաբառը, Պարսկաստանի Հայաստանին և Ռուսաստանի Հայաստանին Աշխարհաբառներէն ո՞րչափ տարբեր է, և ասոնցը միւսէն, տե՛ս խեղճ Հայերը իրարու լեզուն չեն հասկնար անգամ։ Ահա՛ Վրաստանի Հայը գինւոյ բաժակն 'ի ձեռին «կոնծում եմ» կը գոչէ, ինչ կ'իմանան այս բառէն ուրիշ երկրի Հայերը, և ո՞չինչ,



միթէ անոնք ալ Հայ եղբայրներ չե՞ն, և ինչո՞ւ իրարու լեզուն չե՞ն կրնար իմանալ, ինչո՞ւ չեն հասկնար թէ Վրաստանի Հայը «կոնծում եմ» ըսելով կ'ըմպեմ կ'ուզէ ըսել։ Մաճառաստանի Հայը «շօքօտալ» ըսելով սոնավաճառ, «Նացիան» ըսելով ազգ, «զտավր» ըսելով եզն կ'իմանայ, որոնցմէ ուրիշ երկրի Հայերը բան չեն հասկնար։ Պարկաստանի Հայը «ղուզի թաղնամա» ըսելով զբօսավայր, «աջար» ըսելով զարմանք, «թալվար» ըսելով խաղողնոց, և «այուչա» ըսելով սալոր կ'իմանայ, և ինչպէս հնար է մի առ մի թուել այն ամեն անպիտան խորթութիւնները, որոնցմէ իւրաքանչիւր գաւառի Հայ զատ զատ ամենևին բան չիմանար, այսպէս ահա՛ ամէն օտար տէրութեանց ներքև ուր ուրեք որ Հայ կը գտնուի իրարմէ օտար աշխարհաբառներ ունին և կը գործածեն։ Ի՛նչ խղճալի վիճակ, խե՛ղճ Հայեր, ձեր Հայրենիքէն տարագիր վտարանդի մերժուելնիդ իբր թէ բաւական չէր, ձեր մայրենի միակ լեզուին ոսկի գօտէն ալ քակուելով, իրարմէ ո՛չ միայն աշխարհաց հեռաւորութեամբ զատուեցաք, այլ և որ աւելի ցաւալին այն է, Հայութեան միաւորող լեզուն ալ մոռնալով հազար ու մէկ օտարական իմաստներ անջրպետեցին և ահարկու խտրոյներով օտարացաք իրարմէ։ Ո՞ւր մնաց ուրեմն աշխարհաբառի արդէն ընդհարցեալ լեզու եղած ըլլալը։ Իսկ Գրաբառին գալով՝ կը հրաւիրենք այնպիսիները աչք ածել միանգամ բոլոր երկրագնտիս երեսը գտնուած Հայոց վրայ, և տեսնել թէ ուր ուրեք որ Հայոց Եկեղեցի մը կը գտնուի, հոն Գրաբառը անպատճառ լսելի է ամենօրեայ գործածութեամբ, գրեթէ Հայաբնակ տեղ մը չ'կայ, ուր Գրաբառ լեզուն քիչ շատ ծաւալած չըլլայ։ Ուրեմն կը հետևի թէ Գրաբառ լեզուն Աշխարհաբառէն շատ աւելի տարածուած լեզու մի է, մանաւանդ աշխարհաբառը հազար ու մէկ ճիւղերու բաժնուած

ձող լրարու անիմանալի, մինչդեռ Գրաբառը իւր անփոփոխ միութեամբը բոլոր ցրուեալ Հայերուն սրտով և խորհրդով միանալու եղական և վերջին կապն է։

Դարձեալ աշխարհաբառին ջատագովը մէջ կը բերէ երկրորդ փաստ մը թէ «Գրաբառը մանկանց ուսում սորվելու ժամանակին մեծ մասը կը գրաւէ յումպէտս, որով առանց կենցաղօգուտ ուսմունք և գիտութիւն ուսանելոյ թերակատար կը հրաժարին դպրոցէս, այնպէս որ սորուածնին ալ ետքը մոռնալով իրենց անդին ժամանակը յոչինչ վատնած կ'ըլլան»։ Քննենք ուրեմն խնդիրը եթէ Գրաբառ լեզուին ուսումը մանկանց ժամանակին մէկ մասը կը գրաւէ, միթէ Աշխարհաբառին ուսումը նոյն մասը չ՞գործեր, միթէ արդի շրջաբերական թերթերուն պարունակութիւնը որ աշխարհիկ լեզուաւ գրուած են, ըմբռնելու և խելամուտ ըլլալու համար ժամանակ վատնելու կարօտ չե՞ն մանկունք։ Ա՛րդ եթէ աշխարհիկ լեզուն ալ ժամանակի նոյն կորուստն ալ կը պատճառէ, ուրեմն պէտք չէ դատապարտել Գրաբառը ամուլ համարելով զանի, մինչդեռ աշխարհիկ լեզուին համար վատնուած ժամանակը բոլորովին կորուստ մի է մեր Ազգին համար, վասն զի քանի որ գաւառական բազմատեսակ ճիւղերու բաժնուած է, անկարելի է անով հեռաւոր Հայերուն խորհրդովք միանալը. իսկ Գրաբառին համար վատնուած ժամանակը երբեք յանօգուտ չէ, քանզի անով կրնայ ամեն Հայ Արեւելքէն մինչև Արեւմուտք Հիւսիսէն մինչև Հարաւ իւր խորհուրդները ուրիշ Հայերու հաղորդել, որմէ կը ծնանի միաբանութիւնը և Ազգային յառաջադիմութիւնը։ Ա՛պա ուրեմն Գրաբառ լեզուին ուսումը ո՛չ միայն ժամանակի կորուստ չէ, այլ Ազգային կանուխ կամ անագան միութեան սկզբնաւորութիւնն է կրնանք ըսել։

Դարձեալ Աշխարհաբառին ջատագովը երրորդ փաստ



մն ալ մէջ կը բերէ ըսելով թէ «Գրաբառը մեռեալ լեզու է, հին և չ'մշակուած, իսկ Աշխարհաբառը բաւական մշակուած և կոկուած ըլլալով լաւ ևս է զանի յատկացնել Ազգին իբր սեպհական լեզու»։ Պատասխան։ Ապաքէն մշակուած ըսելով աշխարհիկ լեզուն ազնուացած լեզու է ըսել կ'ուզէ։ Ա՛րդ տեսնենք թէ՝ այնպէ՞ս է։ Ո՞ր գաւառին Աշխարհաբառը ազնիւ է ըսել կ'ուզէ, ա՞րդեօք Վրաստանինը, եթէ Հնդկաստանինը, Ռուսաստանի՞նը, թէ Տաճկաստանինը, եթէ մէկը ազնիւ, և միսերը խժական են, այն ազնիւ համարուածը միւս Հայաբնակ Երկիրներու մէջ ալ հանրացընելու համար միթէ ժամանակի կորուստ չ՞պատճառեր, բայց մենք համարձակ կը խոստովանինք թէ՝ ցրուեալ ազգերնուս զանազան աշխարհիկ լեզուներուն բոլորն ալ ոչ միայն ազնիւ չ'են, այլ նաև խժական, խորթ, և աղքատ, և ազգայնութենէ բոլորովին օտար, վասնզի Հայկէն սկսեալ մինչև Ռուբինեաց դարը, ո՛ր Հայը իւր մտաց ծնունդը աշխարհիկ լեզուաւ աւանդած է, և ոչ ոք, այլ բոլոր Ազգային Մատենագրութիւնք Գրաբառ լեզուաւ գրուած ըլլալով՝ Հայութեան մէկ մեծ նշանաբանն ալ Գրաբառին մէջ ունի իւր գոյութիւնը, Հայկական ախորժակներն, Հայկական ոգին, վերջապէս ինչ որ Հայաստանի յիշատակ մը կ'արթնցընէ մեր մտաց մէջ՝ գտնելու համար Գրաբառին դիմել պէտք է։ Վասն զի մեր Երանելի Թարգմանիչները երբ Ազգային լեզուին պայծառութեան ջահը վառեցին, իրեն՝ և օտար սուրբ Հարց իմաստութեան տաղանդները Գրաբառ լեզուաւ աւանդեցին մեզ յետագայից, և որոնք որ Գրաբառին քիչ շատ տեղեկութիւն ունին կրնան կարդալ և օգուտ քաղել։ Նաև եթէ Աշխարհաբառը Գրաբառին հետ բաղդատելու ըլլանք կը տեսնենք թէ Գրաբառը մեր կանոնական մայր և Ազգային մեծահարուստ լեզուն է, որուն հայադէտ օտարազգիք ալ վկայեցին իսկ,

աշխարհաբառը աղքատ, անկանոն, և Բաբելոնեան խառնուրդ մի։

Արդ Հայ մը իր յղացած իմաստները չկրնար լաւագոյն բացատրել աշխարհիկ լեզուաւ, ինչպէս Գրաբառով, որ բիւրապատիկ շնորհալի և պերճ է քան զաշխարհաբառը, մինչև անգամ Ներկայ Ճառս լուսաւորագոյն ևս կը պատմուէր եթէ դիտաւորութիւննիս միայն գաւառիս Հայոց ուղղուած չըլլալով՝ Գրաբառը ընտրէինք մեզ բացատրութեան գործի։ Աղէ բե՛ր Խորենացիին համառօտաբան Ազգային պատմութիւնը, և նոյն ոճով յաշխարհաբառ թարգմանէ, բե՛ր Եղնիկին երկնահանճար իմաստասիրութիւնը, և անոր յղեցուցիչ իմաստները քու Աշխարհաբառովդ շարադրէ, բե՛ր սուրբ Եկեղեցւոյ հոգեուղիղ Շարականները և անոնց բուն քաղցրութիւնը Աշխարհաբառին մէջ ցայտեցընելու փորձ ըրէ, որ տեսնես թէ ի՜նչ զուր աշխատութիւն է։ Եթէ խնդիրը աւելի ծանրութեամբ քննելու ըլլանք դիւրաւ պիտի իմանանք թէ Գրաբառ լեզուին մինչև ցայժմ Եկեղեցիներուն մէջ անփոփոխ մնալը մեր Ազգին անուան իսպառ չմոռցուելուն դեղը և յոյսն եղած է, զոր Աստուծոյ յատուկ շնորհքը պէտք է խոստովանիլ։ Վասնզի ենթադրենք թէ մեր Աստուածաշունչ գիրքերն ու Եկեղեցական երգերն Գրաբառ լեզուաւ գրուած չըլլային, ի՞նչ պիտի ընէին զանազան աշխարհներ ցրուած մեր ժողովուրդները, ո՞չ ապաքէն Եկեղեցի կազմելու համար ամէն մէկը զատ զատ իրենց գաւառական լեզուաւը Եկեղեցական Մատեանները ունենալու փոյթը պիտի ունենային, ո՞չ ապաքէն զատ զատ լեզուներնուն համեմատ հոգեւոր օրհնութիւններ և այլն, պիտի ստանային, և ամէն մէկը աւելի իր ապաստանած Երկրին սովորութեանց քիչ շատ նմանելով, ի՜նչ անկնկալ բաժանումներ տեղի չէին ունենար ան ատեն անոնց մէջ, ի՜նչ անբոյժ երկպառակութիւններ պիտի չծագէին



արդեօք, քանի՛ դիւրութեամբ իրենց ասպնջական Երկրին ազգաց մէջ պիտի ընկղմէին։

Միթէ կարծիք կամ երևակայութիւն են այս խօսքերը, միթէ ասոնց փորձերն տեսնուած չե՞ն։ Ո՞ւր են Եւրոպայի զանազան կողմերը ցրուող մեր Հայերը, ո՞չ ապաքէն բաց 'ի սակաւուց ամէնքն ալ ընկղմեցան այն ազգերուն ովկիանոսին մէջ, ի՞նչ էր պատճառը. վասնզի Հայաստանէն ելլալնէն ետև քանի որ կորսնցուցին իրենց Գրաբառը, և գաւառական լեզու մը ապաւինեցան, այն գաւառական լեզուով ալ չկրնալով հաղորդակցիլ ուրիշ Երկրին Հայերուն հետ, ինքզինքնին մնաւոր գտան այն անթիւ օտարներուն մէջ, այն ատեն դիւրին եղաւ օտար ամուսնութեանց կապեր ունենալ, իրենց ծնունդներն ալ բոլորովին ուրացած Հայրենի լեզուն օտարացան բնաւին, և բնաջինջ եղաւ անոնցմէ Հայութիւնը, և եղան օտար ազգ և օտար մարդ, մինչև անգամ իրենց Հայսերունդէ յառաջ եկած ըլլալնին ալ սկսան ուրանալ։ Այսպէս աշա՛ անհամար ժողովորդներ կորսուելով մեծապէս նուազեցաւ Հայոց ազգը երկրիս վրայ։

Եւ աշա՛ ասոր համար էր որ ըսինք թէ ազգին փրկութեանը համար Վարդանանց թափած արիւնը ամենայն զօրութեամբ կը բողոքէ Հայերուն դէմ որոնք ազգութիւնը ապահովող երեք նշանաբանները պահելու թոյլ են։ Հապա՛ ուրեմն, Արժանապատիւ սուրբ Հարք, և մեծարոյ ունկնդիրք, թող ներուի մեզ ըսել թէ Ազգային լեզուին ամենայն զգուշութեամբ պահելը մեծ պարտաւորութիւն մի է ամենուս, պատկառ կենանք ուրեմն այս նուիրական պարտաւորութեան, քաջ ճանաչենք մեր լեզուին յարգը, որ Հայկայ կիսաւեր տան մէջ առկայծեալ ճրագի նման գոնէ աղօտ լոյս մի կուտայ, որով միայն կը զօրենք, Ազգային հին աւանդութեանց, բարուց, և ոգւոյն վրայ ուղիղ տեղեկութիւն ունենալ։ Անով մեր Ազ-

դութիւնը մինչեւ ցայժմ կենդանի մնացած է, պէտք պահենք մերեմն անոր յիշատակը, արծարծենք Հայկաբանութեան սէրը մեր մէջը, եւ ինչպէս մեր նախորդք յանձնեցին մեզ՝ նոյնը անվնաս եւ մենք աւանդենք մեր ապագայից։ Համեմատեցէք ասկէ յիսուն տարի յառաջ խօսուած լեզուն այժմու գործածուածին հետ, եւ զգալի տարբերութիւն պիտի նշմարէք հոն. մեր մանկութեան ժամանակ չէինք խօսէր այն լեզուն որ այժմու մանկութիւնը կը խօսի, եթէ քիչ ժամանակի մէջ այսքան զգալի տարբերութիւն յառաջ եկաւ, ինչո՜ւ այսուհետեւ աւելի մեծ յառաջադիմութիւն պիտի չյուսանք տեսնել մեր լեզուին մէջ շնորհիւ Ազգային դաստիարակութեան, ապահով ըլլանք զի ապագայ սերունդը աւելի մաքուր եւ Գրաբարին յարակից բարբառ մի պիտի գործածէ, քաջայոյս մնալով միանգամայն որ Ազգային Վարժարանաց յառաջադիմութեամբը հետզհետէ պիտի հասնի մեր Ազգը ստանալու այն երջանիկ պարզ Գրաբառ լեզուն, որ ընդհանուր Ազգիս բնիկ լեզուն է, որով եւ ամեն Հայ իրարու միտք դիւրաւ հասկնալով եւ հասկցընելով պիտի ըլլայ մէկ ազգ մէկ սիրտ եւ մէկ հոգի։

յ3 փետրուարի. 1866 — Աշակերտ Առաջին Դասու

Ի Ս. Մեսր. Վարժարանի. — Ճարտարախօսութեան

ՎԵՐՋ

ԳԵՏՕԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ